# ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ՝ Ս. ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑՈՒ ՈՒԹ ՄԵՂՔԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ

Դ. դարի եկեղեցական նշանավոր հայրերից է Ս. Եւագր Պոնտացին[1], որի անունը հիշատակում ենք Հայոց Սրբազան Պատարագի մեջ՝ անապատական եւ ճգնավոր հայրերի շարքում: Աշակերտելով եգիպտական անապատների մեծանուն հայրերից Մակար Եգիպտացուն եւ Մակար Ալեքսանդրացուն՝ նա եգիպտական վանականության «երրորդ սերնդի» ներկայացուցիչ էր՝ իր մեջ ամփոփելով նախորդ հայրերի հոգեւոր ողջ փորձառությունը եւ իր անձնական ներդրումն ունենալով հատկապես ճգնակեցական աստվածաբանության մեջ: Եւագր Պոնտացին եգիպտական անապատի ամենաբեղուն եւ կրթված վանականն էր, որի հոգեշահ գրվածքները մեծ ազդեցություն են թողել հետագա բազում հայրերի մտածողության վրա, ովքեր գրել են մարդու հոգեւոր ներանձնական եւ ներհայեցողական կյանքի մասին: Նրա կյանքի ուղին անմիջականորեն կապված է եղել Կապադովկյան հայրերից երկուսի՝ Ս. Բարսեղ Կեսարացու (329-379) եւ Ս. Գրիգոր Աստվածաբանի (328-389/90) հետ, որոնք մեծ ազդեցություն են թողել Եւագրի աշխարհայացքի ձեւավորման վրա: Հայ մատենագրության մեջ «անապատի միտք»[2] պատվանունով հայտնի այս եկեղեցական հոր չափազանց խստակյաց կյանքը, խոնարհությունը, բարությունը եւ հոգեւոր հարուստ փորձառությունը Եւագրին մեծ համբավ բերեցին, եւ նա իրավամբ դարձավ փորձառու մի վանական, որին այցելում էին աշխարհի բազում կողմերից՝ լսելու նրա խրատներն ու ազդու խոսքը: Նրա գրվածքներից խորապես ազդվել են ինչպես վանական միջավայրում ստեղծագործած հեղինակներ, նույնպես եւ նշանավոր աստվածաբաններ Հովհաննես Կասսիանը (360-435), Դորոթեոսը (Զ. դար), Հովհաննես Կղեմաքոսը կամ Սանդուղքը (Է. դար), Մաքսիմոս Խոստովանողը (580-682), Իսահակ Ասորին (Է. դար), Սիմեոն Նոր Աստվածաբանը (949-1022) եւ ուրիշներ:

Եւագրի երկերում որոգինեսյան հայացքներ հայտնաբերելու պատճառով Քաղկեդոնական Եկեղեցին Ե. «Տիեզերաժողովում» նզովեց Որոգինեսին ու Եւագրին քրիստոսաբանական ոչ ուղղափառ տեսակետների համար: Ինչպես այս, այնպես էլ Եւագր Պոնտացու անձի հանդեպ ոչ միանշանակ եւ երբեմն կանխակալ կարծիքների պատճառով նրա երկերը շրջանառվել են այլ հեղինակների՝ Նեղոս Սինայեցու (Դ.-Ե. դդ.-ավելի ճիշտ՝ Նեղոս Անկյուրան-

1 Ս. Եւագր Պոնտացու եւ նրա մատենագրական ժառանգության մասին տե՛ս «Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացւոյ վարք եւ մատենագրութիւնք ի Յունէ ի Հայ բարբառ ի հինգերորդ դարու» (=**Եւագր Պոնտացի**), աշխատասիրութեամբ եւ ծանօթութեամբք ի լոյս ընծայեաց Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ Թ.-ՃՂԲ., **Գ. Զարբհանալեան**, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 421-432, **Հակոբ Քյոսեյան**, Եկեղեցու հայրեր, վարդապետներ (IV-VIII դդ.), Երեւան, 2007, էջ 152-161, **Ս. Ստամբոլցեան**, Սուրբ Եւագր Պոնտացի. «Գանձասար» աստուածաբանական հանդէս, հ. Ը., Երեւան, 2010, էջ 247-254, "Творения аввы Евагрия: Аскетические и богословские трактаты," перевод, вступительная статья и коментарии А. И. Сидорова, «Мартис», 1994, ïз 5-75, Православная энциклопедия, Т. XVI, Москва, 2007, էջ 557-581:

2 Այսպես է նրան բնորոշում Վարդան Արեւելցին իր ճառերից մեկում. տե՛ս **Վարդան Արեւելցի**, Ճառք, Ներբողեանք, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Երեւան, 2000, էջ 199: Վարդան վարդապետից օգտվելով՝ նույնն է արձանագրում նաեւ ԺԴ.-ԺԵ. դդ. հեղինակ Մատթեոս Ջուղայեցին՝ Եւագրի ութ մեղքերին նվիրված իր մեկնության մեջ. տե՛ս «Գիրք ութ խորհրդոց մեղաց՝ արարեալ սրբոյ Հօրն Եւագրեայ: Եւ հաւաքեցեալ ի մի յօգնաջան երկամբ Մատթէոսի վարդապետի բանասիրի» (=**Մատթէոս**), Կ. Պոլիս, 1750, էջ 3:

ցու), Ս. Բարսեղ Կեսարացու, Մաքսիմոս Խոստովանողի անուններով: Բայց Ի. դարի հայրաբանների ուսումնասիրությունների շնորհիվ այսօր ճշտված է հենց Եւագրի գրչին պատկանող երկերի շրջանակը, չնայած դրանցից շատերը դեռ չունեն գիտաքննական հրատարակություններ: Այս տեսանկյունից կարեւոր են նաեւ Եւագրի աշխատությունների հայերեն, ասորերեն, ղպտերեն, վրացերեն, արաբերեն եւ այլ լեզուներով թարգմանությունները: Հայոց եւ Ասորի եկեղեցիները, Ս. Եւագրի հարգում դրսեւորելով հավասարակշիռ եւ անկողմնակալ մոտեցում, թարգմանել են նրա մի շարք գործերը, որոնց մի մասի հունարեն բնօրինակներն այժմ անհայտ են գիտությանը: Ուստի վերոգրյալ թարգմանությունները ձեռք են բերել բնօրինակի արժեք եւ կարեւոր են եւագրագիտության համակողմանի եւ ամբողջական ուսումնասիրման ու ընկալման համար: Եւագր Պոնտացու երկերի հայերեն թարգմանությունների զգալի մասը կատարվել է Ոսկեդարում: Ինչպես ցույց է տվել դրանց ուսումնասիրող Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Բարսեղ վրդ. Սարգիսյանը (1852-1921), նրանից ազդվել եւ նրա երկասիրություններից օգտվել են Ե. դարի ազգային-եկեղեցական գործիչներ Ս. Հովհան Մանդակունին (478-490), Ս. Սահակ Պարթեւն ու Եզնիկ Կողբացին: Նրա ազդեցությունը կարելի է տեսնել նաեւ Թաթուլի խրատներում[3]: Եկեղեցական այս հորից օգտվել եւ նրան վկայակոչել են նաեւ հետագա մեր մատենագիրները՝ Հովհաննես Կոզեռնը (Ժ.-ԺԱ. դդ.)[4], Հովհաննես Գառնեցին (ԺԲ.-ԺԳ. դդ.), Վարդան Արեւելցին († 1271), Հովհաննես Երզնկացի Պլուզը († 1293), Վարդան Այգեկցին (ԺԲ.-ԺԳ. դդ.), Ս. Գրիգոր Տաթեւացին († 1409) եւ ուրիշներ: Նրա երկերից իմաստասիրական մեջբերումներ է կատարել նաեւ Ալեքսանդր Ա. Ջուղայեցին († 1714) իր աշխատության մեջ[5]: Քանի որ Ս. Եւագր Պոնտացու գրելաոճը շատ անգամ առակավոր է, խորհրդապաշտ եւ ոչ դյուրամարս, միջնադարում՝ հայկական եւ ասորական[6] մատենագրության մեջ, ստեղծվել են նրա երկերի «լուծմունքներ»՝ մեկնություններ, որոնց նպատակն է եղել ընթերցողին ավելի մատչելի դարձնել նրա մտածումներն ու աշխարհայացքը: Հայ իրականության մեջ նմանատիպ մեկնություններ են գրել Հովհաննես Սարկավագը († 1129)[7], Գրիգոր Սկեւռացին (ԺԲ.-ԺԳ. դդ.)[8], Մատթեոս Ջուղայեցին[9] եւ ու-

---

3 **Եւագր Պոնտացի,** էջ ճԽԶ.-ճՀԲ.:

4 Հակոբ Քյոսեյանն իր հոդվածներից մեկում նշում է, որ Հովհաննես Կոզեռնը «Խրատ յոգէշահ եւ պատասխանի Յովհաննէս Կոզեռն վարդապետի» երկում վկայակոչում է նաեւ Ս. Եւագր Պոնտացուն. **Հակոբ Քյոսեյան**, Հովհաննես Կոզեռն Տարոնացու աստվածաբանական ժառանգությունը. «Էջմիածին», 2007, Զ.-Է., էջ 58, «Մատենագիրք հայոց», ԺԶ. հատոր, ԺԱ. դար, Երեւան, 2012, էջ 49-52:

5 **Ալեքսանդր Ջուղայեցի**, Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998, էջ 69-86:

6 Նման լուծմունքներ են հեղինակել Յակոբ Սարուգեցին († 521), Բաբբա Մեծը (551-628) եւ Դիոնիսիոս Բար Սալիբին († 1171):

7 Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (=ՄՄ) ձեռ. Հմր 4150, ԺԳ դար, էջ 95բ-96բ: Հովհաննես Սարկավագի՝ Եւագրի երկերի մյուս լուծմունքները տե՛ս էջ 85բ-95ա, 97ա-109ա:

8 Հայկական ձեռագրական ավանդույթում Եւագրի երկերից մեկի մեկնության հեղինակ է համարվում ոմն Գրիգոր վարդապետ: Վերջինիս ով լինելու մասին արտահայտվել են զանազան կարծիքներ: Հ. Բարսեղ Սարգիսյանը կարծում է, որ այդ Գրիգորը չէր կարող Գրիգոր Սկեւռացին լինել, եւ պահպանված լուծմունքը վերագրում է Գրիգոր Գ. կամ Փոքր Վկայասերին (1113-1166). տե՛ս **Եւագր Պոնտացի,** էջ ճԾԴ-ճԾԹ: Բանասեր Թ. Մինասյանը, անդրադառնալով Գրիգոր Սկեւռացու մատենագրական ժառանգությանը եւ մեջբերելով նորահայտ մի ձեռագրի հիշատակարան, ապացուցում է, որ լուծմունքի հեղինակ Գրիգոր վարդապետը ոչ այլ ոք է, եթե ոչ կիլիկյան Լեւոն Բ. թագավորի խոստովանահայր եւ ժամանակի նշանավոր վարդապետներից Գրիգոր Սկեւռացին. մանրամասն տե՛ս **Թ. Հ. Մինասյան**, Գրիգոր Սկեւռացու գրական ժառանգության հարցի շուրջ. «Լրաբեր» հասարակական գիտությունների, 2007, Հմր 2, էջ 93-101:

9 Տե՛ս **Մատթէոս**, էջ 3-190: Վերջինս իր աշխատության մեջ չի վկայակոչում Կիրակոս Երզնկացուն,

րիշներ: Ս. Եւագր Պոնտացու երկերը մեկնել է նաեւ Երզնկայի դպրոցի նշանավոր քաբունապետներից Կիրակոս Երզնկացին († 1355): Նա մասնավորապես լուծմունքներ է գրել Եւագր Պոնտացու «Յաղագս Ը. խորհրդոցն»[10] եւ «Հարիւրաւորք վեցերորդք»[11] երկերի վերաբերյալ, որոնցում եւս մեկ անգամ բացահայտվում է Կիրակոս քաբունապետի՝ Աստվածաշնչի, հայաբանական եւ իմաստասիրական ժառանգության քաջիմացությունը, եւ նյութն ընթերցողին առավել մատչելի դարձնելու կարողությունը: Իբրեւ հմուտ մեկնիչ՝ նրա նպատակն է ոչ միայն բացատրել կամ մեկնաբանել այս կամ այն գործը, այլ նաեւ դրանից բխող բարոյախրատական պատգամը փոխանցել մեզ:

Եւագրի ութ խորհուրդներին նվիրված Կիրակոս քաբունապետի մեկնությունն առավելաբար ինքնուրույն աշխատություն է, որում հեղինակը, նկատի ունենալով Եւագրի թվարկած ութ խորհուրդները կամ մեղքերը, մեկնաբանում է դրանք աստվածաբանական, բարոյախրատական, մարդաբանական եւ այլ տեսանկյուններից: Այս մասին նույն երկի մեկնիչ Գրիգոր վարդապետն ասում է. «Տրամատեաց յութ մասունս զհզաւրագոյն խորհուրդս, որ ի մեզ արկանէ թշնամին եւ եցոյց, թէ ո՞յք են նոքա, եւ զի՞նչ առնեն ի մերձենալն առ մեզ»[12]: Իսկ Վարդան Արեւելցին իր ճառերից մեկում արձանագրում է. «Ութ խորհուրդս ասէ Եւագրիոս ապականիչս, յորոց վերայ կան դասք դիւաց՝ ըստ ախտակիր խորհրդոցն բաժանեալք յութ եւ պատերազմին ընդ մարդկան զտիւ եւ զգիշեր, որոց ընդդէմ կալով քաջքն եւ իմաստունքն պսակին յաղթութեամբ»[13]:

Կիրակոս Երզնկացին աշխատությունը գրել է Հովհաննես քաբունապետի հորդորով: Վերջինիս խնդրանքով նա մեկնել է նաեւ Ս. Եւագր Պոնտացու «Հարիւրաւորքը», որում իր պատվիրատուին անվանում է «ներհուն եւ հանճարեղ քաբունապետ»[14], ինչպես նաեւ «Բանք խրատականք» խորագրով երկը[15]: Այս մասին Կիրակոս Երզնկացին «Յաղագս Ը. խորհր-

---

հավանաբար ծանոթ չի եղել նրա գործին: Բարսեղ վրդ. Սարգիսյանը, Եւագրի երկերի մեկնությունների մասին խոսելիս, վկայակոչում է նաեւ Երուսաղեմի Մատենադարանի 139 թվահամարի ձեռագիրը, որում հետեւյալ տեղեկությունն է պահպանվել. «Զեւագրին Լուծմունքն եւ զԱռ որսին՝ Գէորգ Երզնկացին ՌԾԳ. թուին (Հայոց) արար, այն է յամի Տեառն 1354». **Եւագր Պոնտացի,** էջ ճԾ: Դժվարանում ենք որեւէ բան ասել վերոգրյալ մեկնության մասին, քանզի առկա ձեռագրացուցակներում մեզ չհաջողվեց Գեւորգ Երզնկացու անվամբ նման գործ գտնել: Եւագրի մի քանի երկերի արեւելահայերեն թարգմանիչ Սեդա Ստամբոլցյանը ծանոթագրություններում, բացի Գրիգոր մեկնիչի մեկնությունից, օգտագործել է նաեւ ՄՄ Հմր 728, 1621 թ., էջ 128բ-139բ ձեռագիրը: Թե ինչ կապ ունի այս անանուն մեկնությունը Գեւորգ Երզնկացու հիշյալ մեկնության հետ՝ բավարար փաստեր չունենալու պատճառով ոչինչ չենք կարող ասել:

10 Այս աշխատության բնագիրը ՄՄ ձեռ. Հմր 2542 (1476 թ., էջ 132բ-159բ) հիման վրա, անգլերեն թարգմանությամբ եւ համառոտ ուսումնասիրությամբ հրատարակել է Տիգրան Կարապետյանը. տե՛ս **Tigran Karapetyan**, *Kirakos Erznkaci's on the Eight Thoughts of Evagrius,* "*St. Nersess Theological Review*", 2000, V. 5-6, էջ 39-118: Քանի որ ձեռնամուխ ենք եղել Կիրակոս Երզնկացու ամբողջական մատենագրության պատրաստությանը, մեր ձեռքի տակ ունենալով այս մեկնության առավել հին եւ արժանահավատ մի քանի այլ ձեռագիր ընդօրինակություններ՝ վեց ձեռագրերի հիման վրա պատրաստել ենք երկի համեմատական բնագիրը: Համեմատության ընթացքում օգտագործել ենք նաեւ վերոգրյալ ձեռագիրը, եւ այն չենք համեմատել տպագրի հետ:

11 Լուծմունքի համեմատական բնագիրը պատրաստվում ենք տպագրել առաջիկայում: Երկի մասին տե՛ս **Աշխեն Գրիգորյան**, Եւագր Պոնտացու «Հարիւրաւորք վեցերորդք» երկի աստվածաբանությունը. «Էջմիածին», 2007, Զ.-Է., էջ 91-99:

12 ՄՄ ձեռ. Հմր 1418, 1280 թ., թ. 235ա:

13 **Վարդան Արեւելցի**, Ճառք, էջ 70:

14 ՄՄ ձեռ. Հմր 1980, 1391 թ., թ. 41ա:

15 **Զաքարիա վ. Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Բանք խրատականք» երկը. «Էջմիածին», 2013, Ե., էջ 75-87:

դոցն» երկի սկզբում գրում է. «Վասն որոյ եւ ես իբրեւ ծանեայ զխնդիրս ձեր *պատուելի րաբունապետ Յովհաննէս*, եւ որք մի անգամ ընդ քեզ են եղբարք, յոյժ ուրախացայ, զի բարի եւ գովելի մասին եղէք փափագաւղ: Սակայն հայելով ի միտս իմոց տկարութիւն եւ *յիւր ողորմութեանցդ մեծութիւն եւ բարձրութիւն*՝ յոյժ զարհուրեցայ, զի զոր պահանջէքդ ի մէնջ, ի վեր է քան զկար զաւրութեան իմոյ եւ միայն նոցա ձեռնարկելի, որք Հոգւովն Աստուծոյ զաւրացեալք՝ յաղթող գտան Է. մահու չափ խորհրդոցն, եւ քրովբէաւրէն առաքինութեամբ զհին մարդն ի բաց մերկացան, եւ զնորն զգեցան: Որք սերմանեցին զարդարութիւն եւ հնձեցին զպտուղ կենաց եւ լուսաւոր արարին ինքեանք զլոյս գիտութեան»:

Անշուշտ, նման լուծմունք գրելու համար մեկնիչից պահանջվում էր ոչ միայն տեսական գիտելիքներ զանազան բնագավառներից, այլ նաեւ հարուստ հոգեւոր փորձառություն եւ տարիքային հասունություն: Ուստի ամենեւին էլ պատահական չէ, որ Հովհաննես րաբունապետը հենց Կիրակոսին է հանձնարարել այս գործը, որն իր ժամանակի բանիմաց եւ փորձառու հոգեւորականներից էր, որի հոգեմտավոր կարողություններին նա քաջատեղյակ էր:

Անդրադառնալով երկի գրությանը խոչընդոտող հանգամանքներին՝ Կիրակոսը խոսում է իր ծեր հասակի եւ ամուլ մտքի մասին: «Դուք ի հնացեալ մեղաւք ծերունւոյ եւ ի պապասկացան երկրագործէ պտուղ լուսոյ խնդրէք, եւ ի փշոց՝ խաղող, եւ յապառաժ վիմէ՝ ջուր, եւ ի կնիւնաբեր հեղեղատէ՝ արդիւն ցորենոյ, եւ ի յամուլ արգանդէ մտաց՝ ծնունդ իմաստութեան»,- պատկերավոր արձանագրում է Կիրակոս րաբունապետը: Չնայած այս ամենին՝ Կիրակոսը վստահ է, որ առ Աստված աներեր հավատքը կարող է հրաշքներ գործել եւ իրեն ազատել մտքի ամլությունից, ուստի դիմում է իր պատվիրատուին՝ աղոթքներով աջակցելու իրեն՝ «թեւաւք փոքր մակուկի մտաց մերոց» ավարտելու սույն ձեռնարկը: Ինչպես ժամանակին նկատել է բանասեր Արմենուհի Սրապյանը, Կիրակոս Երզնկացին իր առաջացած տարիքի մասին խոսում է նաեւ իր երկու գործերում[16]: Մահվանից մեկ տարի առաջ՝ 1354 թվականին, գրած Ս. Եւագրի «Հարիւրաւորքի» լուծմունքի հիշատակարանում Կիրակոսն իր մասին ասում է. «Տկար զոլով հոգւով եւ մարմնով եւ անիմաստ եւ փոքրատար մտօք»[17]: Մյուսը «ՅԱստուծոյ ամենակալէն» սկսվածքով խրատական բովանդակությամբ շրջաբերական թուղթն է՝ ուղղված իր հոգեւոր զավակներին՝ կրոնավորներին, քահանաներին եւ ժողովրդին: Բացատրելով անձամբ իրեն դիմողների մոտ չգնալու պատճառը՝ Կիրակոսն ասում է. «Զի ես ծեր եմ եւ ոչ եմ կարող եւ կու վախեմ գալ ի բռնութենէ այլազգեաց: ...Իմ ծերութեան ալիքս ի ձեզ բարեխաւս»[18]: Ցավոք, հստակ չէ այս թղթի գրության թվականը նույնպես: Քանի որ «Հարիւրա-

16 Տե՛ս **Արմենուհի Սրապեան**, Կիրակոս Երզնկացի. բանասիրական ճշգրտումներ. «Բազմավէպ», 1993, էջ 196-197:

17 ՄՄ ձեռ. Հ$^{մր}$ 1980, թ. 160բ: Նույն երկում նա կրկին խոսում է իր ամուլ մտքի եւ գործի դժվարության մասին: Հետաքրքիր է, որ Եւագրի այս երկու գործերում էլ Կիրակոս Երզնկացին նույն պատճառաբանություններն է բերում, բայց այդ ամենը հնարավոր համարում անհողդողդ հավատքի առկայության դեպքում: «Հարիւրաւորքի» մեկնության մեջ նա երկու պատճառ է բերում, որ չի կարող մերժել Հովհաննես րաբունապետի խնդրանքը. «Այլ ինձ յոյժ վիշտ վտանգի է յերկուց դիմաց՝ հրաժարել ի խնդրոյդ եւ զանհնազանդիցն կրել պատուհաս եւ վրիպել ի քաղցր սիրոյ սիրելոյդ եւս ծանրագոյն զրկումն է». տե՛ս անդ, թ. 41բ: Այս արտահայտության վերջին մասը խոսում է պատվիրատուի եւ Կիրակոսի հարաբերությունների ջերմության մասին: Մի րաբունապետի, որը մեծ դեր է խաղացել Կիրակոս Երզնկացու կյանքում:

18 «Եզնկացի Կիրակոս վարդապետի թուղթը». «Բազմավէպ», 1943, Յուլիս-Դեկտեմբեր, էջ 66: Թղթի հրատարակիչ Հակոբ վրդ. Շազուրյանը, տեղյակ չլինելով Կիրակոսի կենսագրության մանրամասներին եւ նոր տվյալներին, հավանական է համարել, որ նա պետք է ծնված լիներ 1235-1240 թթ.: Նկատի ունենալով թղթի որոշ տեղեկություններ եւ հաշվի առնելով, որ Կիրակոսը թղթում իրեն արդեն ծեր է համարում՝ աշխատասիրողը թղթի գրության հավանական տարեթիվ է համարում 1305-1307 թթ. միջակայքը: Քանի որ այսօր մենք հստակ

ւորքի» մեկնությունը Կիրակոսի վերջին գործն է, բնականաբար, «Յաղագս Ը. խորհրդոցն» երկը նա գրել է դրանից առաջ՝ հավանաբար 1340-ական թվականներին: Հնպաքրքրական է, որ եթե ութ խորհուրդներին նվիրված աշխատությունը Կիրակոս Երզնկացին շարադրել է միայն Հովհաննես րաբունապետի խնդրանքով, ապա «Հարհիրաւորքի» դեպքում վերջինիս խնդրանքին միացել է նաեւ նրա եղբորորդի Հովհաննեսը[19]: Մի՞թե բավական չէր Հովհաննես րաբունապետի խնդրանքը: Կարծում ենք, որ վերջին իրողությունը փաստում է հետեւյալը: Հավանաբար Եւագրի՝ ութ մեղքերին նվիրված աշխատության մեկնությունից հետո անցել էր որոշակի ժամանակ, եւ Կիրակոսն արդեն կյանքի մայրամուտին էր՝ ծեր լինելով բառի բուն իմաստով: Հաշվի առնելով Կիրակոսի հոգեմտավոր պատրաստվածությունը՝ Հովհաննես րաբունապետը նրան խնդրել էր նաեւ մեկնել Եւագրի «Հարհիրաւորք» աշխատությունը, բայց Կիրակոսը հրաժարվել էր այդ մեծ ձեռնարկից առաջացած տարիքի պատճառով, որի մասին էլ արդարացիորեն նշում է իր վերջին երկերում: Ուստի Հովհաննեսի խնդրանքը երկրորդում է նաեւ նրա եղբորորդին՝ մյուս Հովհաննեսը՝ երկուսով հայցելով Աստծո օգնականությունը Կիրակոսի համար: Այս դեպքում Կիրակոս րաբունապետին այլ բան չէր մնում, քան անսալ իր հոգեւոր եղբայրների խնդրանքին, հայցել նրանց աղոթքը, զորակցությունը եւ Տիրոջ ողորմությունը՝ սկսած գործն ավարտին հասցնելու համար: Նախքան բուն մեկնությանն անցնելը, ցանկանում ենք անդրադառնալ ութ խորհուրդների համակարգի առաջացմանը, որը լայնորեն արծարծվել է նաեւ հայրախոսական գրականության մեջ:

Ութ խորհուրդների կամ մեղքերի մասին տեսությունն առաջացել է վանական միջավայրում՝ Դ. դարի վերջում, երբ շեշտվում է խորհուրդների կամ մեղքերի դեմ վանականի ամենօրյա պայքարի անհրաժեշտությունը: Աստծո հետ մարդ արարածի հարաբերությանը խանգարում է մեղքը, որը ժամանակի ընթացքում ապականում է նրա հոգեւոր ներաշխարհը՝ հանգեցնելով հոգեւոր եւ ֆիզիկական մահվան: Ուստի վանականին կամ ճգնակյացին այլ բան չի մնում, քան անդադար աղոթել՝ վանելու համար իրենից չար խորհուրդները: Բնականաբար, Եւագր Պոնտացին, լինելով վանականության ակունքներում եւ գործնական կյանքում զգալով եւ ապրելով այդ հոգեւոր պատերազմը, չէր կարող չանդրադառնալ ութ խորհուրդներին, որոնցից էլ բխում են մյուս մեղքերը: Նա առաջին հեղինակն է, որը համակարգել եւ անդրադարձել է վերոգրյալին իր համապատասխան մեկնաբանություններով[20]: Ս. Եւագրն

---

գիտենք, որ Կիրակոս Երզնկացին մահացել է 1355 թ., ուստի նա չէր կարող ծնված լինել Հակոբ վարդապետի ենթադրած թվականներին: Մեր կարծիքով՝ նա ծնվել է 1275 թ. կամ դրան շատ մոտ: Հետեւաբար 1305-1307 թթ. նա չէր կարող ծեր լինել: Սա ենթադրում է, որ թուղթը գրվել է ավելի ուշ: Նույն կենսագրական տվյալների սակավությունն է պատճառը, որ ընդհանրական թղթի մասին առաջին անգամ կարծիք հայտնած Միքայել վրդ. Չամչյանը գրել է. «Ի խոր ծերութեան իւրում գրեաց թուղթ յորդորական իբրեւ գքարոզ եւ կանոն խրատուց առ ամենայն հայս եւ մանաւանդ առ քահանայս՝ երկար եւ ճառօրէն, միջակ եւ աշխարհաբառ ոճով՝ առ ի դիւրահաս լինելոյ ամենեցուն». **Միքայէլ Չամչեանց**, Հայոց Պատմութիւն, հ. Գ., Երեւան, 1984, էջ 508:

19 Աշխատության հիշատակարանում հեղինակն ասում է. «Արարի զվերլուծութիւն Հարհիրօրաց սուրբ հօրն Եւագրեայ..., հրամանաւ եւ աղօթիւք երկուց վարդապետացն հոմանունաբար Յովաննէս անձայնելոց եւ այլ եղբարցս». ՄՄ ձեռ. Հ[մր] 1980, թ. 160բ: Կիրակոսի եղբորորդու մասին տե՛ս **Արմենուհի Սրապյան**, Կիրակոս Երզնկացի, էջ 186-194:

20 Հունարեն ձեռագրերի մեծ մասում այս երկը վերագրվում է Ս. Նեղոսին, բայց որոշներում եւ հատկապես ասորական եւ եթովպական ձեռագրական ավանդույթում այն համարվում է Ս. Եւագրինը: Հայ մատենագրության մեջ այս աշխատասիրությունը պահպանվել է Եւագր Պոնտացու անունով: Անդրադառնալով երկի հեղինակային պատկանելության խնդրին՝ Հ. Բարսեղ Սարգիսյանը ցույց է տալիս, որ Եւագրի եւ Նեղոսի երկերում տարբերություն կա մեղքերի դասակարգման հարցում: Բացի այդ, Նեղոսի գրվածքի համար հիմքը եղել է հենց Եւագրի «Վասն ութ խորհրդոց» ճառը՝ հավելելով. «Իմ համոզմամբս Նեղոսի գէթ այդ ճառն ուրիշ

այս մասին գրում է Անատոլիին[21] ուղղված նամակում. «Ութ են ամենայն, որ հզօրագոյն խորհուրդք են, իսկ առաջին՝ որկորստութեան, եւ յետ այնորիկ՝ պոռնկութեան, երրորդ՝ արծաթսիրութեան, չորրորդ՝ տրտմութեան, հինգերորդ՝ բարկութեան, վեցերորդ՝ ձանձրութեան, եօթներորդ՝ նորափառ ամպարհաւաճութեան, ութերորդ՝ ամպարտաւանութեան: Արդ, սոցա ամենեցուն կամ նեղել պնդել զոգիսն եւ կամ ոչ նեղել, այն է, որ ոչ ի մեր կամս է, այլ յամենայն նոցա կամ չյամենայ եւ կամ բիծս ինչ եւ չարչարանս եւ կամ անցս անցից, այն ի մեր կամս է»[22]:

Եւագր Պոնտացու մատենագրական ժառանգությունն ուսումնասիրած գիտնականների առաջ ծառացած խնդիրներից է եղել՝ պարզելու արդյոք Եւագրն առաջի՞ն հեղինակն է, որն անդրադարձել է ութ խորհուրդներին: Դեռեւս Ե. դարում այս կասկածն է հայտնել նույն դարի հեղինակ Գենադիոս Մարսելցին իր երկում[23]: Գիտնականների կարծիքով՝ չնայած Եւագրի այս երկում զգացվում է Որոգինեսի (185-253/4) ազդեցությունը հատկապես խորհրդանշական համեմատությունների հարցում[24], բայց իրավամբ Եւագրին է պատկանում ութ մեղքերի տեսության համակարգված ներկայացումը[25]: Վերջինիս հետեւողությամբ նման համակարգի ենք հանդիպում նաեւ Նեղոս Սինայեցու եւ Հովհաննես Կասսիանի համանուն երկերում, այն տարբերությամբ միայն, որ եթե Եւագրի մոտ տրտմությանը հաջորդում է բարկությունը, ապա Նեղոսի[26] եւ Կասսիանի մոտ հակառակն է[27]:

Ութ մեղքերի տեսությունը զարգացրել է նաեւ Հովհաննես Կղեմաքոսն իր հայտնի «Սանդուղք» երկում: Հոգեւոր կատարելությանը հասնելու նրա 30 աստիճաններում վերոբերյալ մեղքերը բացատրված են ավելի լայն համատեքստում[28]: Վերոբերյալի մասին առանձին կամ խառը հերթականությամբ խոսում են նաեւ հետագա այլ եկեղեցական հայրեր[29]:

Եւագրի համակարգած ութ խորհուրդների կամ մոլեկան մեղքերի հիմքն Աստվածաշունչն է, մասնավորապես Հիսուս Քրիստոսի խոսքը. «Այլ յորժամ այսն պիղծ ելանիցէ ի մարդոյ, շրջի ընդ անջրդին տեղիս, խնդրէ հանգիստ եւ ոչ գտանէ, յայնժամ ասէ. «Դարձայց ի տուն իմ՝ ուստի ելին»: Եւ եկեալ գտանէ պարապորդ մաքրեալ եւ յարդարեալ: Յայնժամ երթայ եւ առնու ընդ իւր եւթն այլ այսս չարագոյնս քան զինքն, եւ մտեալ բնակէ անդ, եւ լի-

---

գրչէ մեղած խմբագրութիւն է, կամ լաւ եւս յարասութիւն Եւագրի յիշեալ գործերուն, եւ թէ այդ խմբագրութիւնը կատարուած ըլլալու է Եւագրի մահուանէն ետքը եւ գլխովին տարբեր պայմանաց եւ պարագաներու մէջ». **Եւագր Պոնտացի,** էջ ԿԹ.-Հ.:

21 Անատոլի մասին տե՛ս **Եւագր Պոնտացի,** էջ 22-24:

22 **Եւագր Պոնտացի,** էջ 27, “Творения аввы Евагрия”, էջ 96:

23 Տե՛ս “Церковные историки IV -V веков”, Москва, 2007, էջ 65-66:

24 Այս մասին տե՛ս **Фома Шпидлик**, *Духовная традиция Восточного христианства. Систематическое изложение,* Москва, 2000, էջ 295-296:

25 Տե՛ս **Сергей Зарин**, *Аскетизм по православно-христианскому учению,* т. 1, кн. 2, С.-Петербург, 1907, էջ 309-353:

26 Տե՛ս “Добротолюбие”, т. II, перевод с греческого святителя Феофана Затворника, 4-е издание, Москва, 2010, էջ 243-250:

27 Տե՛ս “A select library of Nicene and Post-Nicene Fathers of the Christian Church”, second series, translated into English with prolegomena and explanatory notes under the editorial supervision of Philip Schaff and Henry Wace, V. XI. Sulpitius Severus, Vincent of Lerins, John Cassian, Michigan, 1986, էջ 201-290:

28 Տե՛ս “Лествица возводящая на небо преподного Иоанна игумена Синайской горы”, Москва, 1997, էջ *26-470:*

29 Դեռեւս Գ. դարում Կիպրիանոս Կարթագենացին իր երկերից մեկում նշում է ութ մեղքերի մասին. տե՛ս “The Catholic Encyclopedia”, V. XIV, 1913, New York, էջ 5: Խնդրին անդրադարձել է նաեւ Ս. Եփրեմ Ասորին (306-373). տե՛ս “Добротолюбие”, т. II, էջ 365-416:

նի յետին մարդոյն այնորիկ չա՛ր քան զառաջինն» (Մատթ. ԺԲ. 43-45)[30]: Ավետարանական այս հատվածից պարզ երեւում է, որ մարդու մեջ մտած ութ դեւերն ի վերջո նրան կործանման են տանում: Հայ իրականության մեջ սուրբգրային այս տեղին հենց այս տեսանկյունից է մեկնաբանել ԺԳ.-ԺԴ. դարերի մեկնիչ Հովհաննես Ծործորեցին Մատթեոսի Ավետարանի մեկնության մեջ: Նա վերոբերյալ հատվածի մեկնության մեջ խոսում է ութ խորհուրդների մասին՝ Եւագրի նման որկրամոլությունը համարելով իբրեւ առաջին խորհուրդ, որն էլ իր հերթին բերում է մյուս յոթին[31]: Փաստորեն հայ եկեղեցական մատենագրության մեջ Կիրակոս Երզնկացին առաջին հեղինակն է, որը մեկնել եւ անդրադարձել է հենց Եւագրի ութ մեղքերի տեսությանը՝ քաջածանոթ լինելով նաեւ յոթ մահացու մեղքերի[32] համակարգին, որոնց մասին նա խոսում է իր մյուս աշխատություններում[33]:

Եւագր Պոնտացու լուծմունքում եւս Կիրակոսն անդրադառնում է յոթ մահացու մեղքերին՝ նշելով, որ այս ձեռնարկը կարող են հաջողությամբ պսակել նրանք, «որք Հոգւովն Աստուծոյ զաւրացեալք՝ յաղթող գտան Է. մահու չափ խորհրդոցն, եւ քրովբէաւրէն առաքինութեամբ զհին մարդն ի բաց մերկացան, եւ զնորն զգեցան: Որք սերմանեցին զարդարութիւն եւ հնձեցին զպտուղ կենաց եւ լուսաւոր արարին ինքեանք զլոյս գիտութեան»:

Կիրակոսի ծանոթ լինելն այս երկու համակարգերին ցույց է տալիս, որ տվյալ ժամանակաշրջանում Հայոց Եկեղեցում կենցաղավարել են ե՛ւ ութ խորհուրդների, ե՛ւ յոթ մահացու մեղքերի տեսությունները: Վերջինս արդեն համակարգված տեսնում ենք մեղքերի ընդհանրական խոստովանության բանաձեւում, որի հեղինակ է ավանդաբար համարվում Ս. Գրիգոր Տաթեւացին: Մեղքերի խոստովանության մասին Կիրակոս րաբունապետի աշխատությունները եւ այս լուծմունքը փաստում են մեղքերի խոստովանության բանաձեւի սահմանման եւ ամբողջացման գործում Կիրակոսի ունեցած մեծ դերակատարությունը[34]: Սա մի ժամանակաշրջան է, երբ կանոնական տեսք է ստանում մեղքերի ընդհանրական խոստովանությունը: Ուստի Կիրակոս Երզնկացին, լինելով իր ժամանակի հայտնի եկեղեցականներից մեկը, Եւագրի այս լուծմունքում ներկայացնում է ութ խորհուրդների եւ յոթ մահացու մեղքերի մի համադրություն, որում բարոյախրատական շեշտադրությամբ ընդգծում է չար խորհուրդներից հեռու մնալու գաղափարը, որոնցով սատանան պատերազմում է մարդկանց հետ:

Ութ մեղքերի համակարգի մասին խոսելիս Կիրակոս Երզնկացին եւ հետագա մեր մյուս վարդապետներն օգտագործում են «խորհուրդ» բառը, մինչ յոթի դեպքում՝ «մահացու մեղք» արտահայտությունը: Անկասկած բառերի այս տարբերակումն ունի իր բացատրությունը: Եթե ութ խորհուրդների տեսությունն առաջացել է վանական միջավայրում, որի նպատակն էր հեռու պահել վանականին չար եւ դիվական խորհուրդներից՝ չթողնելով նրան ընկնել զգացական կամ երեւակայական խաբկանքի մեջ, ապա յոթ մահացու մեղքերն առավել գործնական

30 Հմմտ. Ղուկ. Ե. 19-21: Սուրբգրային այս տեղին մեջբերում է նաեւ Կիրակոս Երզնկացին իր լուծմունքում:

31 Տե՛ս **Յովհաննէս Ծործորեցի** (ԺԳ.-ԺԴ. դդ.), Մեկնութիւն Աւետարանին որ ըստ Մատթէոսի (Ե. 18-ԻԸ. 20), Ս. Էջմիածին, 2009, էջ 243-244:

32 Յոթ մահացու մեղքերն են՝ հպարտությունը, նախանձը, բարկությունը, ծուլությունը, ագահությունը, որկրամոլությունը եւ բղջախոհությունը:

33 Կիրակոս Երզնկացին յոթ մահացու մեղքերին անդրադարձել է իր մի քանի երկերում. տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին. «Էջմիածին», 2012, Գ., էջ 82-83, **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացին մեղքերի մասին. «Էջմիածին», 2013, Ա., էջ 59-63:

34 Տե՛ս նաեւ **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու խրատները մեղքերի խոստովանության մասին, էջ 69, ծնթ. 8:

վիճակն են ներկայացնում, քանզի խորհուրդը դեռեւս մեղք չէ, այլ մի տեսակ նախադուռ, որը գործնականում կարող է մեղքի վերածվել[35]: Այլ խոսքով՝ մեղքը նախ խորհրդի տեսքով է լինում, որը մեր մեջ զգում է չարը՝ սատանան, բայց մեզանից է կախված այն ընդունել կամ չընդունելը: Ահա այս է պատճառը, որ մեր եկեղեցու հայրերը եւ վարդապետները հորդորում են միտքը մաքուր պահել խորհուրդներից:

Կիրակոս Երզնկացուց մի քանի դար առաջ՝ Նարեկյան դպրոցի հիմնադիր եւ Ժ. դարի նշանավոր վարդապետ Անանիա Նարեկացին «Յաղագս խորհրդոց զգուշութեան» գործում հորդորում է ամենքին. «Արդ, նախ յառաջ, քան զամենայն ինչ, խորհրդոց մաքրութեան ջան տար: Վասն որոյ մարգարէն ասէ. «Ապրուած փառաւորեալ է ի խորհուրդս իւրոց» (Սաղմ. ՁԸ. 8)[36]: Իսկ մեկ այլ նշանավոր վարդապետ՝ Ս. Գրիգոր Տաթեւացին, ավելի է խորացնում «խորհուրդ» բառի մասին դատողությունները եւ մեջբերում տասը պատճառ: Այստեղ Տաթեւացին կրկին վկայակոչում է Եւագրի ութ մեղքերի համակարգը՝ նշելով. «Զի չար խորհրդովն հաւանիմք սատանայի եւ բարեկամք լինիմք նմա: Զի ութն խորհուրդ է մեղացն, զոր սատանայ սերմանէ ի սիրտ մարդոյ եւ գերէ ի մեղս եւ որպէս նետիւք ծածուկ ձգէ ի խորհուրդն եւ խոցոտէ զհոգի մարդոյն եւ սապակէ: Վասն այն պարտ է զգուշանալ խորհրդոյ մեղացն»[37]:

Անկախ ութ կամ յոթ մեղքերի համակարգերից, եկեղեցու հայրերի եւ վարդապետների հորդորն է հեռու մնալ մեղքից: Անշուշտ, մեր եկեղեցու աստվածաբանական ժառանգության մեջ երկու համակարգերի՝ իբրեւ նույնական ընկալման մեջ, այնուամենայնիվ, շեշտը դրվել է յոթ մահացու մեղքերի բացատրության վրա, որը հաջողությամբ կատարել է Ս. Գրիգոր Տաթեւացին իր երկերում: Քանի որ վերջինս պայքարում էր նաեւ հայոց հողում կաթոլիկության ազդեցության դեմ, բնականաբար, Տաթեւացին իր աշխատություններում պիտի անդրադառնար այն համակարգին, որը գործածվում էր հենց Կաթոլիկ Եկեղեցում, այսինքն՝ յոթ մահացու մեղքերին[38]: Ամփոփելով եւ համակարգելով հայ աստվածաբանական միտքը՝ նա հանրագիտարանային «Գիրք հարցմանց» աշխատության մեջ վերոբերյալի մասին ասում է. «Նախ ասեմք, թէ համաձայն են միմեանց, զի եւ Եւագրիոս Է. ասէ, զի տրտմութիւն եւ ձանձրութիւն մի երեւին, զի տրտմութիւն ի պակասութիւն բարւոյն լինին, իսկ ձանձրութիւն՝ յաւելուածոյ բարւոյն»[39]: Այնուհետեւ եռամեծ վարդապետն իրեն հատուկ ոճով պալիս է ութի եւ յոթի մանրազնին բացատրությունը[40]: Կիրակոս Երզնկացին նույնպես իր լուծմունքի սկզբում փորձում է բացատրել ութ մեղքերի համակարգը՝ խորհրդանշական կերպով այն կապելով անապատում սատանայի կողմից Տիրոջ փորձության հետ: Հիսուս սատանային տված պատասխաններով մարտնչեց որկրասիրության, արծաթասիրության եւ սնափառության դեմ: Ահա այս երեքն են այն գլխավորները, որոնցից առաջանում են մյուս մեղքերը. «արծաթսիրութիւնն

35 Տե՛ս նաեւ **Tigran Karapetyan**, *Kirakos Erznkaci's on the Eight Thoughts of Evagrius*, էջ 63:

36 «Մատենագիրք հայոց», Ժ. հատոր, Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 356, աշխարհաբար թարգմանությունը տե՛ս «Հոգեւոր կյանքի մասին», Երեւան, 1997, էջ 88:

37 **Գրիգոր Տաթեւացի**, Ամառան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 217, աշխարհաբար թարգմանությունը տե՛ս «Գանձասար» աստվածաբանական հանդես, h. Ը., էջ 505:

38 Կաթոլիկ ավանդության մեջ յոթ մահացու մեղքերի համակարգի ներմուծումը վերագրվում է Գրիգոր Մեծ Պապին (540-604): Նա ութ մեղքերի համակարգից տրտմությունն ու ձանձրությունը մեկ մեղք դարձրեց, սնափառությունը միացրեց ամբարտավանությանը եւ ավելացրեց նախանձը: Գրիգոր Մեծ Պապը նաեւ փոխեց մեղքերի հաջորդականությունը. այս մասին տե՛ս **Сергей Зарин**, *Аскетизм по православно-христианскому учению,* էջ 349:

39 **Գրիգոր Տաթեւացի**, Գիրք հարցմանց (=«Գիրք հարցմանց»), Երուսաղէմ, 1993, էջ 559:

40 Անդ, էջ 559-560:

եւ պոռնկութիւն՝ յորկորստութենէ, տրտմութիւնն, եւ սրտմտութիւնն, եւ ձանձրութիւնն՝ յարծաթսիրութենէ, ամբարտաւանութիւնն՝ ի նորափառութենէ»: Կիրակոս բաբունապետը հաջորդիվ ութ թիվը կապում է չորս առաքինությունների հետ[41]:

Ինչպես իր մյուս երկերում, այստեղ եւս Կիրակոսը շեշտում է, որ հոգին ունի երեք մաս՝ բանական, ցասմնական եւ ցանկական: Օգտվելով Ս. Դավիթ Անհաղթի (Ե. դար) «Սահմանք իմաստասիրութեան» երկից՝ նա ընդգծում է, որ հոգու առաքինություններն են՝ խոհականությունը, արիությունը, ողջախոհությունը եւ արդարությունը: Եւ յուրաքանչյուր զորություն ունի իր առաքինությունները, իսկ վերջիններից յուրաքանչյուրն էլ՝ իրեն հակադիր մոլությունը: Կիրակոսի այս մտածումներում զգացվում է նաեւ Ս. Գրիգոր Նարեկացուն վերագրվող «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» երկի ազդեցությունը, որից նա մեջբերումներ է կատարել իր մյուս երկասիրություններում[42]:

Կիրակոս բաբունապետը լուծմունքը շարադրելիս օգտվել է Սուրբ Գրքից, իմաստասիրական եւ հայրախոսական աղբյուրներից: Յուրաքանչյուր խորհրդին անդրադառնալիս նա անպայման սուրբգրային համապատասխան մեջբերումներ է կատարում՝ իր խոսքն առավել հավաստի դարձնելու համար:

Լուծմունքում նա հանվանե հիշատակում է Ս. Հովհան Ոսկեբերանին (347-407), Ս. Գրիգոր Նազիանզացուն (329-389), Ս. Եւագրին եւ Ս. Նեղոսին, որոնց տեղիները նշել ենք բնագրի տողատակում: Չնայած նա չի տալիս Ս. Դավիթ Անհաղթի անունը, բայց բնագրային համեմատությունը ցույց է տալիս, որ նա օգտվել է նաեւ մեծանուն իմաստասերի «Սահմանքից»:

Ամփոփելով մեր շարադրանքը՝ եւս մեկ անգամ պիտի շեշտենք, որ հայ մատենագրության անդաստանում Ս. Եւագր Պոնտացու «Յաղագս Ը. խորհրդոցն» երկի Կիրակոս Երզնկացու լուծմունքն ինքնուրույն եւ ամբողջական աշխատանք է՝ հստակ ուղղվածությամբ եւ շեշտադրությամբ, որում պարզորոշ երեւում է Կիրակոս աստվածաբանն ու բարոյագետը, նախանձախնդիր եկեղեցականն ու հոգեւոր հայրը:

Այս կարճ ներածականից հետո անդրադառնանք խորհուրդներից յուրաքանչյուրին եւ Կիրակոսի մտածումներին՝ հնարավորության դեպքում դրանք դիտարկելով համաբնույթ այլ երկերի լույսի ներքո:

**ՈՐՈՎԱՅՆԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ.** այս «խորհուրդը»[43] առաջանում է այն ժամանակ, երբ մարդ չարաշահում է ուտելիքի օգտագործումը, որով վնաս է հասցնում իր օրգանիզմին: Ուտելի այս մեղքից ձերբազատվելու լավագույն միջոցը ժամանակի վանականների համար պահեցողությունն էր: Նրանք ուտում էին այնքան, որ սովամահ չլինեին: Սակայն խիստ պահեցողությունը հանգեցնում էր ստամոքսի խանգարման եւ մարմնի այլ օրգանների ոչ նորմալ գործելուն, ուստի շատ վանականներ հրաժարվում էին պահքից: Եւագր Պոնտացին որովայ-

41 Հմմտ. **Tigran Karapetyan**, *Kirakos Erznkaci's on the Eight Thoughts of Evagrius*, էջ 52:

42 Խնդրի մասին տե՛ս **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Նախերգան Տեառնընդառաջին» ճառը. «Էջմիածին», 2011, Գ., էջ 99-100, «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան». «Մատենագիրք հայոց», ԺԲ. հատոր, Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1035-1038, հմմտ. «Գիրք հարցմանց», էջ 559-560, «Մեղայ Աստուծոյ», աշխատասիրությամբ Սեդա Ստամբոլցյանի, Ս. Էջմիածին, 2001, էջ 42-43:

43 Կիրակոս Երզնկացին այս մեղքի համար օգտագործում է «որովայնամոլութիւն», «որկորստութիւն» կամ «որկրամեկրութիւն» բառերն առանց որեւէ իմաստային տարբերակման: Իսկ այս երկի մեկ այլ մեկնիչ՝ Մատթեոս Ջուղայեցին իմաստային զանազանություն է տեսնում «որկորստութիւն» եւ «որկորամոլութիւն» բառերի միջեւ՝ խոսելով նաեւ վերջինիս տարբերակների մասին. տե՛ս **Մատթէոս**, էջ 5-13:

նամոլության ներքո հասկանում էր դևերի կողմից վանականներին ներշնչվող այն փորձությունը, թե պետք է ավելի մեղմել պահեցողությունը, քանզի այն վնասում է առողջությանը[44]: Որովայնամոլության դևը զանազան պատկերների միջոցով աշխատում էր շեղել վանականին պահեցողությունից և ժուժկալ կյանքից՝ կտրելով խորը հոգևոր ապրումներից և նրան նետելով աշխարհիկ գայթակղությունների աշխարհը, որտեղ մեծ դեր էր հատկացվում նաև ուտելիքին և խմելիքին[45]:

Շարունակելով հայրախոսական գրականության մեջ ձևավորված ավանդույթը՝ Կիրակոս Երզնկացին որովայնամոլությունը կամ այլ կերպ՝ որկրամոլության մեղքը համարում է «աղբիւր ամենայն ախտից», որը պատճառ դարձավ մեր նախածնողի՝ Ադամի անկմանը, և մահը մտավ աշխարհ[46]: Ս. Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց» կոթողային աշխատության մեջ բացատրում է, թե ինչու են վարդապետները հպարտությունը համարում առաջին մեղք, մինչ Եւագրը՝ որովայնամոլությունը: Ըստ եռամեծ վարդապետի՝ «Նախ՝ զի առաջին մարդն ի դրախտին որկորստութեամբ մեղաւ, և այն առաջին մեղք եղև մարդկային բնութեան: Երկրորդ՝ զի ի մանկունս հասակաւ նախ որկորստութիւն տիրէ և ապա յերիտասարդութեանն պոռնկութիւն զօրանայ:... Երրորդ՝ զի շղթայք մեղաց այսպէս ունին զկարգն, զի նախ որկորստութեամբ լնու զորովայնն և յետ այնորիկ պոռնկութեամբ թափէ զնա»[47]: Կիրակոսն այլ օրինակներով ցույց է տալիս պահեցողության և ժուժկալության օգուտը մարդու համար: Ի տարբերություն Ադամի՝ նրա սերունդներից Ենովքը պահքի և ժուժկալության շնորհիվ անմահացավ՝ հաղթելով մահվան: Վերջինիս մասին Սուրբ Գիրքն ասում է. «Եւ հաճոյ եղև Ենոք Աստուծոյ, և ոչ ուրեք գտանէր, զի փոխեաց զնա Աստուած» (Ծննդ. Ե. 24): Ինչպես տեսնում ենք, Աստվածաշունչը ոչինչ չի ասում Ենովքի պահեցողության մասին: Կիրակոս Երզնկացին այս տեղեկությունը հավանաբար քաղել է պարականոն գրականությունից կամ հայրերի գրվածքներից[48]:

Կիրակոս բաբունապետն այնուհետև անդրադառնում է Նոյի և ջրհեղեղի պատմությանը՝ վերջինիս պատճառներից մեկը համարելով որովայնամոլությունը: Նույն այս մեղքի պատճառով Ղովտը Սոդոմից դուրս եկավ, և Աստված կործանեց Սոդոմն ու Գոմորը: Ինչպես միշտ հեղինակն իր ասածներն ապացուցում է սուրբգրային համապատասխան վկայություններով:

Որովայնամոլության հակառակը պահքը և ժուժկալությունն են, որոնք Կիրակոսը «աստուածատես գործ» է անվանում: Պահեցողության շնորհիվ Մովսես մարգարեն Աստծուն տեսավ և Նրանից ստացավ օրենքների երկու տախտակները: Եղիան նույնպես Աստծուն տեսավ և հրեղեն կառքով երկինք վերացավ: Այն օգնեց նաև Դանիելին և երեք մանուկներին, ովքեր փրկվեցին Տիրոջ ողորմությամբ:

Որովայնամոլության մասին դատողություններում՝ Կիրակոսը սուրբգրային մեջբերում-

44 Տե՛ս **Եւագր Պոնտացի,** էջ 27:

45 Հմմտ. **Մարթէոս**, էջ 13-23:

46 Հմմտ. "Творение иже во святых отца нашего Иоанна Златоуста, Архиепископа Константинопольского", СПБ, 1901, Т. 7, էջ 131, «Ամառան հատոր», էջ 263, **Վարդան Այգեկցի**, Խրատներ, Երևան, 1999, էջ 105:

47 «Գիրք հարցմանց», էջ 561:

48 Տե՛ս «Թանգարան հին և նոր նախնեաց: Ա. Անկանոն գիրք Հին Կտակարանաց», Վենետիկ, Ս. Ղազար, 1896, էջ 321, Ենովքի մասին ավանդություններին տեղյակ է նաև Վարդան Այգեկցին. տե՛ս **Վարդան Այգեկցի**, Խրատներ, էջ 54, 58:

ներ է վկայակոչում հաղբեցողության[49] մասին, որը Վարդան Այգեկցին իր խրատներում «որովայնամոլության եղբայր եւ գործակից է անվանում»[50]: Ըստ Կիրակոսի՝ քանի որ հարբեցողությանը պոռնկությունն է «լծակից», պետք է հեռու մնալ այս ախտից նույնպես: Պոռնկությանը, սեռական ցանկությունների առաջացմանը նպաստում է նաեւ շատակերությունը, իսկ դրան օգնում՝ չափավորությունը. «Եւ յոլովութիւն կերակրոց բորբոքէ զհուր ցանկութեան եւ սաստկէ զհոգին այրմամբ ախտին եւ ի հուր գեհեննին արկանէ: Ի պակասել փայտի շիջանի հուր, եւ ի նուազել կերակրոց սպառին ախտք: Ի կորդացեալ եւ ի խոպանացեալ երկիր փուշ եւ պատրակ բուսանի եւ ի միտս որովայնամոլից խորհուրդք չար ցանկութեան եւ պոռնկութեան ծնանի եւ սնանի»:

Կիրակոս րաբունապետն այնուհետեւ խոսում է մարդու զգայարանների մասին՝ հորդորելով դրանք մաքուր պահել մեղքից եւ չար բաներից, քանի որ այդ ամենն ընդելուզված են իրար: Ահա այս պրամաբանությամբ բազում եկեղեցական հայրերի նման Կիրակոսը նշում է, որ որկրամոլությանը հաջորդում է պոռնկությունը:

**ՊՈՌՆԿՈՒԹՅՈՒՆ.** Ս. Եւագր Պոնտացին «Աղոթքի մասին» երկում այս մասին ասում է. «Թէպէտ եւ ընդ Աստուծոյ կարծիցես զոլ, զգո՛յշ լեր ի պոռնկութեան դիւէ, քանզի յոյժ է պատրող եւ մախացող եւ կամի սրագոյն իսկ զոլ քան զշարժումն եւ սթափումն մտաց քոց, որպեսզի յԱստուծոյ անջատել զնա՝ առաջի նորա կալով ահիւ եւ երկիւղիւ»[51]: Վանականները շատ զգույշ պետք է լինեն այս մեղքից, որը կարող է վրա հասնել հանկարծակի, երազի մեջ զանազան կանանց կերպարների միջոցով կամ պարզապես զգոնության թուլացման պատճառով: Պոռնկության մեղքի դեմ պայքարելու միջոցներից է նաեւ կուսության պահպանումը եւ կանանց հետ շփումների սահմանափակումը[52]: Իսկ ճշմարիտ ճանապարհն աղոթական վիճակն է եւ Աստծուն առավել մոտ լինելը:

Կիրակոս րաբունապետը, անդրադառնալով «մի՛ շնայցես» եւ «մի՛ սպանանիցես» ապտվածային պատվիրանների՝ Երկրորդումն Օրինաց եւ Ելից գրքերում առկա տարբեր հերթագայությանը, ընդգծում է, որ «շնութիւնն եւ սպանութիւնն ազգակից են միմեանց, զի բազում սպանութիւն լինի ի շնութենէ»: Եւ այս ամենի հետեւանքը հղիության արհեստական ընդհատումն է վախի եւ ամոթի պատճառով. «Զի պոռնկին եւ ոչ բերեն ի լոյս զմանուկն, այլ սպանանեն վասն երկեղի եւ ամաւթոյ»:

Կիրակոսը Եւագրի նման շնությունը երկու տեսակի է բաժանում՝ հոգեւոր եւ մարմնավոր: Հոգեւոր շնությունը նույն կռապաշտությունն է եւ մտքով շնանալը:

Մարմնական պոռնկությունը[53] նույնպես երկու տեսակ է՝ բնական եւ անբնական: Մեկ-

---

49 Կիրակոս Երզնկացին հարբեցողության մասին իր խրատներից մեկում շատ պատկերավոր ասում է. «Արբեցութիւն է գերեզմանաբնակութիւն՝ զնդան մտացն». տե՛ս **Զաքարիա արեղա Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացին մեղքերի մասին, էջ 62:

50 **Վարդան Այգեկցի,** Խրատներ, էջ 106:

51 «Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց», հ. Բ, Վենետիկ (=Վարք հարանց), 1855, էջ 709, աշխարհաբարի վերածումը՝ **Սուրբ Ներսես Սիսայեցի**, Աղոթքի մասին. «Գանձասար» աստուածաբանական հանդէս, 1992, հ. Ա., էջ 190: Հունարեն ձեռագրերում այս երկը վերագրված է Նեղոսին, իսկ ասորական եւ արաբական ավանդության մեջ՝ Եւագրին. տե՛ս **J. P. Migne**, Patrologiae Cursus Completus, Series Graeca, t. 79, col. 1165-1200: Հայրաբանների մեծամասնության կարծիքով այս երկն իրականում Եւագր Պոնտացու գրչի արդյունքն է. "Творения аввы Евагрия", էջ 20, 87:

52 Այս մասին տե՛ս նաեւ **Մատթէոս**, էջ 35-41:

53 Եկեղեցու հայրերը տարբերակում են «շնութիւն» եւ «պոռնկութիւն» բառերը: Նույն զանազանությունն ենք տեսնում նաեւ Ս. Գրքում: Բայց հաճախ այս երկու բառերն օգտագործվում են միեւնույն իմաստով:

նիչը բնական պոռնկություն է համարում, երբ օրինավոր ամուսնության ծիրից դուրս փղամարդը շնանում է կնոջ հետ, իսկ անբնական ասելով՝ նկատի ունի «արուագիտութիւնն, անասնամոլութիւնն, մծղնագործութիւնն»: Նրա համար պոռնկություն է նաեւ ազգապղծությունը, երբ իրար են խառնվում հարազատների արյունները:

Հետաքրքիր են հատկապես Կիրակոս Երզնկացու մտածումներն արվամոլության եւ սպանության տարբերության մասին: Ըստ նրա՝ եթե մարդասպանը հոգին մարմնից է բաժանում, որը հետո Աստված կվերականգնի, ապա արվամոլը կործանում է ինչպես իր, այնպես էլ իր հետ հարաբերվողի հոգին ու մարմինը՝ մատնելով հավիտենական տանջանքներին: Կիրակոսն այս մեղքերից ազատվելու դեղամիջոցը աշխարհականների համար տեսնում է օրինավոր ամուսնության, իսկ կույսերի եւ կրոնավորների դեպքում՝ նյութականից հեռու մնալու մեջ. «Եւ նիւթ ցանկութեան բոցոյն է կերակուր եւ ըմպելի՝ հանդերձ զեղխութեամբ, եւ շռայլութեամբ, եւ հանգիստ, եւ անգործ կալն, եւ խաւսք, եւ տեսութիւն կանանց, եւ սոքա վառեն զհուր ցանկութեան»: Կիրակոսը հորդորում է հեռու մնալ կանանցից եւ նրանց խաբկանքներից՝ մեղքի մեջ չընկնելու համար, ցույց տալով սրբության ճանապարհը: Իր մտածումները մեկնիչն ավարտում է խրատականով. «Վասն որոյ ջանացարո՛ւք ընդ նեղ դուռն մտանել, քանզի նեղ է դուռն, եւ անձուկ է ճանապարհն, որ տանի յանախտութիւն, եւ նովաւ ի կեանս: Լայն է դուռն, եւ արձակ ճանապարհն զեղխութեան եւ որովայնամոլութեան, որ տանի ի պոռնկութիւն, եւ նովաւ ի կորուստ գեհեննին»:

**ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹՅՈՒՆ.** սա ութ խորհուրդներից երրորդն է: Այն ոչ միայն սերն է դրամի հանդեպ, այլ նաեւ աշխարհիկ իրերի հետ կապվածությունը, որը հանգեցնում է մարդու հոգեւոր նկարագրի անկմանը: Առավել կործանարար է այս մեղքը վանականի համար, որը կարող է բռնված լինել այս ախտով, սակայն չիմանալ այդ մասին[54]:

Մեջբերելով Պողոս առաքյալի խոսքը, թե՝ «Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն»՝ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է այս մեղքի վնասակարության տարբեր կողմերին: Ինչպես որ եթե ծառի ճյուղերը կտրես, ապա նորից կաճեն դրանք եւ կճյուղավորվեն, որովհետեւ արմատը հողի մեջ է հաստատված, նույն ձեւով եթե մյուս ախտերից ազատվես, ապա արծաթսիրությունը բավարար է՝ հոգին կործանելու համար, քանզի «ամենայն ախտիցն արմատ է, եւ ամենայն ախտքն՝ ոստք եւ շառաւիղքն սորա»: Իբրեւ իր պնդումը հաստատող սուրբգրային հիմնավորում՝ մեկնիչը բերում է Հուդա Իսկարիովտացու օրինակը, որն ախտերից զերծ էր եւ հրաշագործ մյուս առաքյալների նման, բայց արծաթսիրությունը կործանեց նրան[55]:

Այնուհետեւ մեկնիչը, ավելի խորացնելով իր դատողությունները խնդրի վերաբերյալ, հորդորում է ամենքին՝ հիշելու, որ մերկ ենք ծնվել եւ մերկ էլ այս աշխարհից գնալու ենք:

---

Օրինակ՝ Վարդան Այգեկցու բացատրության համաձայն՝ շնությունը ծածուկ է գործվում, իսկ պոռնկությունը՝ բացահայտ. **Վարդան Այգեկցի**, Խրատներ, էջ 123-124: Խնդրի մասին տե՛ս նաեւ **Է. Մ Բաղդասարյան**, Հովհաննես Երզնկացին եւ նրա խրատական արձակը, 1977, Երեւան, էջ 157-158, **Մատթէոս**, էջ 24-31:

54 Ս. Հովհան Մանդակունին իր ճառերից մեկում հետեւյալ կերպ է մեկնաբանում արծաթսիրության մեղքը. «Զի՞նչ է արծաթսիրութիւն՝ արծաթսիրութիւն, անհաւատութիւն, անյուսութիւն, անգթութիւն, անողորմութիւն, ագահութիւն, արհամարհութիւն, անբարի սրտութիւն, անձնահաճութիւն եւ ոչ հայել ի պատուիրանն Աստուծոյ». «Տեառն Յովհաննու Մանդակունւոյ Հայոց Հայրապետի ճառք», Վենետիկ, 1836, էջ 183:

55 Շարականագիր Ս. Սահակ Պարթեւն այս մասին ասում է. «Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա՝ զհւր զմեծ զվարդապետն ընդ երեսուն արծաթոյ հրէիցն մատնէր». «Զայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 189, հմմտ. **Վարդան Այգեկցի**, Խրատներ, էջ 109-110:

Արծաթսիրությունը եւ աստվածսիրությունը երկու հակոտնյաներ են, քանզի հնարավոր չէ երկուսը միաժամանակ սիրել՝ հավելելով. «Եւ որպէս հուր եւ խռիւ անհնար է ի միում ծրարոցի բնակել, նոյնպէս ե՛ւ սէրն Աստուծոյ, ե՛ւ սէր ընչիցն: Զի եթէ սէրն Աստուծոյ եմուտ ի ծրարոցն, սպառեցաւ արծաթն, եւ եթէ սէր արծաթոյն զրաւեցաւ սիրտն, ջնջեցաւ սէրն Աստուծոյ ի սրտէն, զի զի՞նչ է հաւասարութիւն սիրոյ լուսոյն եւ ագահութեան խաւարին»:

Կիրակոսն ապա խոսում է արծաթսիրության փարատեսակներից ագահության մասին, որը նույնպես վնասում է մարդու հոգեւոր առաջընթացին: Ցավալի իրողություն է, որ ագահ մարդը երբեք չի բավարարվում եւ կշտանում. որքան նրա ունեցվածքն աճում է, այնքան առավել է քաղցում եւ ագահանում: Այստեղ նա բերում է ծանրաբեռնված նավի եւ աղքատ կրոնավորի օրինակները. «Նաւ ծանրաբեռն դիւրաւ ընկղմի յալեաց ծովու, եւ ընչասէրն հոգաւք աշխարհականաւք ալէկոծի ի ծով կենցաղոյս եւ կորնչի: Անստացուած կրաւնաւոր նաւ է թեթեւաբեռն եւ փութով հասանէ ի նաւահանգիստ սիրոյ եւ անախտութեան»: Կիրակոս մեկնիչի համար հստակ է, որ անգամ հարուստը կարող է երկնքի արքայությունը ժառանգել, եթե իր ինչքից բաժին հանի նաեւ կարիքավորներին եւ ընչազուրկներին:

Արծաթասերի հականիշը ողորմած մարդն է, որն իր ունեցվածքն իրենը չի համարում, այլ՝ Աստծունը՝ յուրաքանչյուրին ըստ կարիքի օգնելով եւ իր ունեցվածքից բաժին հանելով: Բայց այս տեսակի մարդիկ պետք է երբեք չմոռանան վերջին դատաստանի մասին, երբ Աստված անողորմին հավիտենական տանջանքների կդատապարտի, իսկ ողորմածին կարժանացնի հավիտենական կյանքին:

**ՏՐՏՄՈՒԹՅՈՒՆ.** շարունակելով եւագրյան ութ խորհուրդների համակարգի վերլուծությունը՝ Կիրակոս Երզնկացին անդրադառնում է տրտմության խորհրդին: Նկատի ունենալով Բ. Կորնթ. Է. 10-ը՝ նա տրտմությունը երկու տեսակի է բաժանում՝ Աստծուց տրված, որ ապաշխարություն է փրկության համար եւ հավիտենական կյանքն է, եւ ըստ աշխարհի, որը մարմնի եւ հոգու մահվան պատճառ է դառնում: Առաջին տրտմությունը, բնականաբար, անհրաժեշտ է յուրաքանչյուրիս հոգեւոր զորացման համար, իսկ երկրորդը՝ վնասակար է: Կիրակոսը, բացատրելով աշխարհի տրտմության պատճառը, գրում է. «Լինի սա ի պակասութենէ ցանկութեան կա՛մ վասն կերակրոյ եւ հանդերձի, կա՛մ վասն ոսկւոյ եւ արծաթոյ, կա՛մ վասն պոռնկութեան ցանկութեան, կա՛մ վասն բարկութեան եւ փառասիրութեան, կա՛մ վասն ձանձրութեան, զի յորժամ վրիպիցի ի սոցանէ, ի ցանկութենէն տրտմի»: Իբրեւ աշխարհի տրտմության, նա կրկին վկայակոչում է Հուդա առաքյալի՝ հավելելով նաեւ Աքիտոփելի օրինակները, իսկ աստվածային տրտմության օրինակ կարող են լինել Դավիթ մարգարեն ու Պետրոս առաքյալը, որոնք Աստծուց տրված իրենց շնորհները պահեցին հենց տրտմության եւ ապաշխարության միջոցով: Տրտմություն-ապաշխարություն զուգահեռի մեջ Կիրակոսը տեսնում է զղջացող սիրտ եւ արցունքներ, որոնք տրտմությունը վերածում են հոգեւոր զորացման, քանզի քո անօգնականության մեջ ապավինում ես եւ հույսդ դնում Աստծո օգնականության վրա:

Աշխարհի համար տրտմելը վնասակար է մարդու մտքի լուսավորության համար: Կիրակոս Երզնկացին այստեղ մարդկային երկու տեսակի օրինակ է բերում: Եթե տրտմության դեւը չի կարողանում իր թակարդը գցել պարկեշտ, անընչասեր եւ անախտ մարդուն, որովհետեւ վերջինս «աշտարակ հզաւր եւ անմատոյց է», ապա նա դյուրությամբ հաղթում է նրան, ով կապված է նյութականի հետ: Ով արհամարհում է ունեցվածքը, եւ այն չի դարձնում իր կյանքի իմաստը, Հոբի նման հեշտությամբ է ազատվում ունեցվածքից եւ չի ընկնում տրտմության

մեջ, որովհետեւ իբրեւ հոգեւոր անձ գիտե, որ առանց Աստծո կամքի ոչինչ չի լինում: Ըստ ավետարանական խրատի նման Կիրակոսը հորդորում է ոչ թե մամոնային ծառայել, այլ՝ Աստծուն, եւ ուրախանալ առաքինությունների՝ հավատքի, հույսի եւ սիրո բազմապատկման համար:

**ԲԱՐԿՈՒԹՅՈՒՆ.** Կիրակոս Երզնկացին որկրամոլության խորհրդին անդրադառնալուց հետո խոսում է բարկության մասին՝ խնդիրը քննելով մարդաբանական տեսանկյունից. «Բարկութիւն է եռանդն՝ շուրջ զսրտիւն արեանն առ ի տենչումն փոխարէն տրտմեցուցանելոյ»[56]: Հեղինակը զանազանում է բարկության երկու տեսակ՝ բարի եւ չար:

Բարի կամ բնական բարկությունն ուղղված է թշնամու դեմ: Այստեղ նա բերում է շան օրինակը, որն իր տիրոջ տունն է պահպանում եւ հալածում գայլերին ու կծում գողերին, բայց միեւնույն ժամանակ սիրում է իր տիրոջը եւ անգամ պատրաստ է մեռնել նրա համար: Նույն ձեւով բարկությունը «պահապան է հոգւոյ», որը վանում է մարդուց չար խորհուրդները, բայց եղբոր դեպքում լինում է քաղցր եւ հեզ:

Չար բարկությունը մարդու բնությունից դուրս է, որն ուղղված է ոչ թե թշնամու դեմ, այլ՝ եղբոր: Կիրակոսն այստեղ իր դատողությունները փաստում է սուրբգրային բազում օրինակներով՝ կենտրոնանալով սիրո վրա. «Աստուած սէր է, եւ որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ» (Ա. Յովհ. Դ. 16): Հետեւաբար այս տեսանկյունից ով ատելության մեջ է, բնակվում է սատանայի մեջ, իսկ սատանան՝ նրա: Եւ նույն սատանայի պատճառով մարդ գիշերը երազում շատ ցնորամիտ բաներ է տեսնում տարբեր գազանների տեսքով, վախեցած արթնանում, եւ ահից դողում: Իսկ ով, երազում տեսնում է, որ իբր քարքարոտ եւ դժվարին վայրում է կամ ծովի եւ գետի մեջ ընկղմված, նմանատիպ երազները, ըստ Կիրակոս բարբունապետի, լինում են «վասն խռով ննջելոյն եւ անհաշտ մնալոյն առ ընկերն»: Հետեւաբար նախքան արեգակի մայր մտնելը, պետք է հեռացնել խռովարար դեւին եւ իբրեւ պահապան խաղաղության հրեշտակին ընդունել:

Հաջորդիվ Կիրակոս Երզնկացին խոսում է սրտմտության եւ բարկության զանազանության մասին՝ օրինակներ բերելով Ս. Գրքից[57]: Նա պատկերավոր համեմատությամբ ցույց է տալիս նաեւ բարկացած եւ հեզ մարդու տարբերությունը: Ինչպես որ ժանգն է փչացնում երկաթը, այնպես էլ բարկությունը եւ ոխակալությունը՝ բարկացողի սիրտը: Եթե դեմքի արտահայտությունից եւ աչքի պղտոր, արյունով լի լինելուց եւ սրտի չարությունից բարկացած մարդը բացահայտվում է, ապա հեզի երեսն առավել ժուժկալ է եւ քաղցրահայաց եւ լի Ս. Հոգու շնորհներով:

Անդրադառնալով ոխակալության եւ նախանձի կործանարար կողմերին՝ Կիրակոսը կրկին աստվածաշնչյան կերպարների օրինակներով փաստում է իր ասածը՝ եզրակացնելով եւ կոչ անելով. «Վասն որոյ փախիցո՛ւք ի բարկութենէ եւ ի չար նախանձուէ եւ զհետ երթիցուք հեզութեան, եւ արիութեան, եւ բարի նախանձու, զի արքայութեանն Աստուծոյ արժանաւորք եղիցուք շնորհաւք եւ մարդասիրութեամբ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի...»:

**ՉԱՆՁՐՈՒԹՅՈՒՆ.** Կիրակոս Երզնկացին, խոսելով ձանձրության դեւի մասին, այն համարում է «քան զամենայն դեւսն ծանրագոյն, որ եւ «միջաւրեայն» կոչի»: Նրա մտածումները եւ դատողություններն անմիջականորեն կապվում են վանական միջավայրի հետ, քան-

56 Նույն բացատրությունը տե՛ս «Ճառք եւ խոստովանութիւնք հաւատոյ արարեալ սրբոց հարց մերոց Գրիգորի Նարեկացւոյ եւ Վահրամայ վարդապետի», Երուսաղէմ, 1856, էջ 167, **Գրիգոր Տաթեւացի**, Ձմեռան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 388, **Фома Шпидлик**, *Духовная традиция Восточного христианства*, էջ 299:
57 Հմմտ. **Մատթէոս,** էջ 75-76:

զի այս դեւը վանականին օրվա կեսին քնի է մղում եւ կտրում աղոթքից: Այս խորհրդի նպատակն է միայնակյացին հանել իր խցից եւ հոգեւոր պատերազմի դաշտից: Ուստի ամենեւին պատահական չէ, որ Կիրակոսը մեջբերում է անում հենց Եւագրի՝ ութ մեղքերին նվիրված երկից, որտեղ նա անդրադառնում է ձանձրության դեւի՝ միայնակյացին պատճառած վնասներին: Բայց Կիրակոսը չի բավարարվում միայն սրանով, նա այլ օրինակների օգնությամբ ցույց է տալիս այս խորհրդի վնասակարությունը:

Ձանձրության դեւը պաշարում է նրան, ով բնությամբ ավելի թկար է եւ արիաբար չի դիմագրավում փորձություններին: «Որպէս կերակուր առողջ մարմնոյ զաւրութիւն է, նոյնպէս եւ փորձութիւնք՝ արի անձին: Հողմ խորշակի ցամաքեցուցանէ զբոյս, որ յապառաժին անկաւ, եւ փորձութիւնք՝ զանժուժկալ հոգի: Հողմն հիւսիսոյ պարարտացուցանէ եւ բուծանէ զարմտիս, եւ փորձութիւնք հաստատեն զանձն քաջ եւ արի: Ջծառ հաստատեալ եւ զեղեալ արմատովք ոչ կարէ խլել հողմ ուժգին, եւ զհամբերող եւ զժուժկալ անձն ոչ կարէ խախտել դեւն ձանձրութեան»,- եզրակացնում է Կիրակոս քաբունապետը: Նրա համար շատ հստակ է, որ փորձությունները մարդուն պետք է ավելի թրծեն եւ զորացնեն, որպեսզի մարդ ընդունակ լինի Ս. Հոգու շնորհին ընդունել, այլապես, ինչպես մեկնիչն է նշում, «զի դիւրաւ գտանելին դիւրաւ արհամարհելի է»: Ուստի սրանից բխում է, որ նա, ով «բազմապատիկ փորձութեանց ձանձրութեան դիւին համբերեալ թրծի, զջուր շնորհաց Հոգւոյն Սրբոյ ընդունի եւ անաւթ ընտիր Աստուծոյ լինի, զի դժուարագտանելին զգուշալի է»: Այս խորհրդի մասին իր դատողություններում Կիրակոսը եւս մեկ անգամ շեշտում է, որ եթե կարողանանք Աստծո զորությամբ հաղթել ձանձրության դեւին, ապա հաղթած կլինենք նաեւ մյուսներին:

**ՄՆԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ.** Կիրակոս Երզնկացին յոթերորդ խորհուրդն անվանում է «սնափառութիւն», մինչդեռ Ս. Եւագրի հայերեն թարգմանության մեջ այն կոչվում է «նորափառութիւն»[58]: Նույն այս բառն է օգտագործում նաեւ Մատթեոս Ջուղայեցին՝ նշելով, որ պետք է տարբերակել «սնափառ» եւ «նորափառ» բառերը՝ իր հեղագա շարադրանքում բացատրելով դրանք[59]: Իսկ Ս. Գրիգոր Տաթեւացին, Եւագրի յոթերորդ խորհրդի մասին ասում է. «ամբարհաւաճութիւն, որ է փառասիրութիւն»[60]: Չնայած բառային տարբերություններին՝ իմաստային առումով դրանք շատ մոտ են իրար: Այս է պատճառը, որ Եւագրի երկի աշխարհաբարի վերածող Սեդա Ստամբոլցյանը նախընտրել է «սնափառությունը»՝ բնագիրը ժամանակակից ընթերցողին ավելի հասկանալի դարձնելու համար[61]:

Կիրակոս Երզնկացին սնափառությունը «անբնական ախտ» է կոչում, որը հեշտությամբ կարող է պատահել առաքինի մարդկանց: Նա այստեղ բերում է զաղձ ղեղաբույսի օրինակը[62]: Ինչպես որ այս մակաբույծը բուսնում է բույսի մոտ եւ պատում այն, այնպես էլ սնափառությունը՝ առաքինի մարդուն. «Սնափառն մշակ է անվարձ, զաշխատանս կրէ, եւ ի վարձուցն անմասն ելանէ, քանզի պահք մարդահաճոյին եւ աղաւթք, եւ ողորմութիւն ոչ է վասն Աստուծոյ, այլ վասն մարդկային փառաց»: Կիրակոսն այստեղ կարեւորում է ոչ թե արտաքին շղարշը, որը շատ անգամ խաբուսիկ է լինում, այլ ներքին բովանդակությունը: Ինչպես որ դատարկ հասկը տեսնողին լիքն է թվում, բայց երբ շոշափում ես, համոզվում ես, որ պիտանի չէ, նույն ձեւով սնափառի առաքինությունները. շատերին թվում է, թե տվյալ անձն արդար եւ

58 **Եւագր Պոնտացի,** էջ 27, 30, 300:

59 **Մատթէոս**, էջ 109-110:

60 «Գիրք հարցմանց», էջ 560:

61 Տե՛ս **Ս. Ստամբոլցեան**, Սուրբ Եւագր Պոնտացի, էջ 270:

62 Տե՛ս «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն», Վենետիկ-Ս. Ղազար, 1895, էջ 105, **Արշավիր Թորոսյան**, Հայաստանի ղեղաբույսերը, Երեւան, 1983, էջ 41-43:

աստվածպաշտ է, այնինչ իրականում այդպիսիները մարդապաշտ են և եղկելի: Դրա լավագույն օրինակը տվեց Հիսուս Քրիստոս մաքսավորի և փարիսեցու աղոթելու օրինակով: Եթե փարիսեցին տաճարում աղոթելիս առերես արդարացնում էր իրեն, ապա մաքսավորը գիտակցում էր իր մեղավոր լինելը և թողություն խնդրում Աստծուց, ուստի եզրակացությունը մեկն է. «Աղաւթք ամբարհաւաճին ոչ ելանեն յերկինս, այլ ի խոնարհի միայն, զի միտք նորա ոչ են առ Աստուած, այլ առ մարդիկ յերկրի, զի ոչ խնդրեն զփառս Աստուծոյ, այլ զփառս մարդկան»: Կիրակոսը հորդորում է անցավոր բաներ չցանկանալ, այլ հավիտենական փառքին ձգտել, որ միայն Տիրոջով կարող է լինել:

**ԱՄԲԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ.** եթե մեղքերի եւագրյան համակարգում ամբարտավանության կամ հպարտության մեղքը վերջինն է, ապա յոթ մահացու մեղքերի շարքում՝ առաջինը: Անկախ այս տարբերությունից՝ հայրախոսական գրականության մեջ շեշտվում է այս մեղքի հույժ վնասակար լինելը, որով մեղանչել են շատերը՝ կորցնելով փրկության հնարավորությունը:

Կիրակոս Երզնկացին, քաջատեղյակ լինելով մեղքերի դասակարգման երկու համակարգերին, իր մտածումների սկզբում հայտարարում է. «Ամբարտաւանութիւնն է սկիզբն եւ կատարումն ամենայն չարեաց, քանզի նախ սատանայ եղեւ զտակ ամբարտաւանութեան»:

Ի տարբերություն մյուս մեղքերի՝ հպարտության մեղքն անմիջականորեն հակառակվելն է Արարչին, ինչպես որ սատանան արեց: «Ընդդէմ դառնալով Արարչին՝ անկաւ յերկնից իբրեւ զփայլակն, եւ խաւար եղեւ եւ անուանեցաւ սատանայ»,- գրում է Կիրակոսը: Նույն միտքն է արտահայտում նաև Ս. Գրիգոր Տաթևացին՝ ասելով. «Զի ամենայն մեղք կամ ընդդէմ իր մարմնոյ է կամ ընկերին, իսկ հպարտութիւնն է ընդդէմ Աստուծոյ որպէս սատանայի»[63]: Սատանայի անկմանը հաջորդեց մարդու անկումն ու վտարումը դրախտից, և մարդ աստվածանալու փոխարեն մահը ժառանգեց: Այս երկու անկումների պատճառը կրկին ամբարտավանությունն է. «Որպէս ինքն սատանայ ամբարտաւանութեամբն անկաւ յերկնից, նոյնպէս եւ զմարդն ամբարտաւանութեամբն խաբեաց եւ ընկէց»: Այս խորհուրդը կամ մեղքն է պատճառը նաև որովայնամոլության, պոռնկության և մյուս մեղքերի: Ուստի ամեն ինչ պետք է սկսել՝ հենց այս մեղքի դեմ պայքարելով:

Բնականաբար, Կիրակոս Երզնկացին, մատնանշելով ամբարտավանության վտանգավորությունը, իբրև հոգևոր դաստիարակ և հայր, ոչ միայն ախտորոշում է մեղքը, այլ նաև մատնացույց է անում դեղամիջոցը՝ խոնարհությունը՝ «արմատ եւ հիմն ամենայն բարեաց»: Մեջբերելով սուրբգրային մի քանի տեղիներ՝ նա Տիրոջ օրինակով հորդորում է խոնարհ լինել, քանզի ամբարտավանությունը «կոյր ախտ» է, որը չի թողնում մարդ արարածին՝ տեսնելու իր հոգևոր անկյալ վիճակը: Քանի որ «ամբարտաւանութիւնն բանական մասինն եւ մտացն է հիւանդութիւն, զոր ոչ կարէ տեսանել», խորհուրդ է տալիս հոգևոր բժշկի՝ հոգևորականի օգնությանը դիմել, այլապես հավիտենական կորստին կմատնվի:

Իբրև եզրափակում՝ Կիրակոս Երզնկացին խոսում է հպարտության այն վնասակար կողմի մասին, երբ մարդ հպարտանում է՝ մոռանալով, որ բոլոր շնորհներն իրեն Աստված է պարգևել: Այստեղ է, որ մեկնիչը ևս մեկ անգամ հիշեցնում է՝ մշտապես գոհություն հայտնել Աստծուն՝ մեջբերելով աստվածախոս Պողոս առաքյալի խոսքերը. «Տուաւղին բարեացն տուր զփառս եւ զգոհութիւն, յորմէ եղեր, եւ տեեծար, եւ ունիս զէութիւն եւ զզաւրութիւն եւ զներգործութիւն հոգեւոր եւ մարմնաւոր գործոյ, որպէս ասէ առաքեալն, թէ՝ «Նովաւ կամք եւ եմք եւ շարժիմք» (Գործք ԺԷ. 28): Արդ, եթէ զինչ որ ունիս, ամենայնն յԱստուծոյ է, դու ընդէ՞ր

63 «Գիրք հարցմանց», էջ 561:

հպարտանաս. Ապուծոյ զգոհութիւնն ի վերայ ամենայնի տուր, որպէս աս է առաքեալն, թէ՝ «Գոհացարո՛ւք յամենայն ժամ ի վերայ ամենայնի յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, Հաւր եւ Աստուծոյ: Հնազա՛նդ լերուք միմեանց երկեղիւն Քրիստոսի» (Եփես. Ե. 20-21)»:

* * *

Կիրակոս Երզկացու այս լուծմունքի բնագիրը պատրաստել ենք վեց ձեռագրերի համեմատությամբ, որի ժամանակ վերականգնել ենք բառավերջի չգրված *յ*-երը, -*հ* ավարտով բառերի սեռական-տրականի *ւ*-երը, զանց ենք առել *յ*-երի անտեղի գործածությունը եւ բառամիջի անհարկի չգոյությունը: Գրչագրում առկա *աւ*-ի եւ *օ*-ի զուգահեռ գործածություններից նախընտրությունը տվել ենք *աւ* տարբերակին: Բացել ենք բոլոր սուրբգրային պեղիները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []:

Բնագրի պատրաստության ժամանակ օգտագործել ենք հետեւյալ նշանները՝ ] (փոխ.), > (=չիք), ~ (=շրջ), + (=ավելացված է), <> (=կրկնվում է): Ստորեւ տալիս ենք ձեռագրերի նկարագրությունները:

Ա.-Վեն. Մխիթ. մատ. ձեռ. Հմր 1678/1329 (ԺԳ. դ.), էջ 69-104, վայր՝ Երզնկա՞, ստացող՝ Թորոս կրօնաւոր, 206 թերթ, թուղթ, 9x13,5, 18-28 տող, բոլորգիր: Պակասում է երկու թերթ, որոնք լրացրել ենք՝ ըստ ՄՄ ձեռ. Հմր 228-ի[64]:

Բ.- ՄՄ ձեռ. Հմր 228 (1457 թ.) թ. 208բ-241բ, վայր՝ Դերձկոյ անապատ, գրիչ՝ Սիմէոն կր., ստացող՝ Տէր Յակոբ, 244 թերթ, թուղթ, 18,3x14, միասիւն, բոլորգիր,: Ձեռագիրը կիսատ է, վերջին հատվածը բացակայում է:

Գ.-ՄՄ ձեռ. Հմր 4040 (ԺԷ. դար), Ժողովածու, էջ 62բ-71ա, 37ա-56ա, 112 թերթ, թուղթ՝ 20x15, միասիւն, նոտրգիր, 23 տող: Ձեռագիրը նման է Բ. ձեռագրին եւ վերջանում է նույն տեղում:

Դ.-ՄՄ ձեռ. Հմր 2542 (1476 թ.), Ժողովածու, էջ 132բ-159բ, վայր՝ Անկունեաց վանք, գրիչ՝ Զաքար արեղ., կազմող՝ Մելքիսեդեկ, 164 թերթ, թուղթ՝ 17,2x13,5, միասիւն, բոլորգիր, 23-25 տող: 136ա-137բ էջերում այլ բնագիր է:

Ե.-Վեն. ձեռ. Հմր 241/96 (1495 թ.), Ոսկեփորիկ Բ., թ. 19ա-60ա, վայր՝ Կապոսի վանք (յԵկեղեաց գաւառի), գրիչ՝ Խաչատուր արեղ., ծաղկող՝ հաւանօրէն գրիչը, 310 թերթ, թուղթ՝ 17x12, (13x8) , միասիւն, երկսիւն, բոլորգիր, 19-27 տող:

Զ.-ՄՄ ձեռ. Հմր 6832, Գրիգոր Տաթեւացի, Քարոզգիրք (ԺԵ. դ., 1439-ից առաջ, ԺԷ. դար), էջ 403ա-442ա, 458 թերթ, թուղթ՝ 18,5x12,5, միասիւն, բոլորգիր, նոտրգիր, 23-31 տող[65]:

ԶԱՔԱՐԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆ

---

64 Գրությամբ հնագույն երկրորդ գրչագիրը Երուսաղեմի մատ. Հմր 1262, 1378 թ. ձեռագիրն է, որում չկան առաջին չորս ճառերը: Ցավոք, այս ձեռագիրը չենք ունեցել ձեռքի տակ:

65 Համեմատության համար չենք օգտագործել պակասավոր եւ ավելի ուշ գրություն ունեցող ձեռագրերը՝ ՄՄ ձեռ. Հմր 741 (ԺԸ. դար), էջ 133ա-143ա, Վեն. ձեռ. Հմր 1177 (1667 թ.), էջ 270ա-284ա, Հմր 2026 (1764 թ.), էջ 176ա-187ա, Երուսաղեմի մատ. ձեռ. Հմր 171 (1772 թ.), էջ 423-445, Հմր 182 (1790 թ.), էջ 237-246, Ղալաթիայի Ազգային մատենադարանի ձեռագրացուցակ Հմր 108, էջ 87-101:

# ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ[*] ԵԶՆԿԱՑԻՈՅ[**] ԱՍԱՑԵԱԼ[***] ՅԱՂԱԳՍ Ը.[****] ԽՈՐՀՐԴՈՅՆ[*****]

*Զարմանալին քննութեամբ անութն ընտրութեան Պաւղոս զամենայն խնդրուածս մարդկան երկակի տարորոշէ՝ ի վերինն եւ ի ստորինս, եւ թելադրէ* «զվերինն խորհել եւ խնդրել, եւ մի՛ զայս, որ ի[6] յերկրի աստ է» (Կող. Գ. 2), *զի երեւելիքս ժամանակեայ եւ անցաւոր է[7], իսկ աներեւոյթքն[8]՝ անանց եւ յաւիտենական:*

*Եւ որք բաղձան վերնոյն բարութեան, եռակի յեղանակաւ ճեպին ի նոյն՝ ոմանք վեհագունիւն[9], եւ կէսք միջակաւն[10], եւ այլք[11] նուաստագունիւն[12], զի երեք[13] են ճանապարհք փրկելոցն[14]՝ ծառայականն, վարձականն[15] եւ որդիականն: Զի Մարթայ եւ Մարիամ, մինն զբաղեալ[16] ի պէտս մարմնաւորս, իսկ միւսն, նստեալ առ ոտսն Յիսուսի, լսէր զԲանն կենաց: Եւ ի խնդրելն Մարթայի ի Տեառնէ զաւգնութիւն քեռն, գովէ Տէրն[17] զՄարիամ, թէ մասն բարի ընտրեաց[18], որ ոչ բարձցի[19] ի նմանէ, եւ զՄարթային[20] ոչ անպէտ[21], այլ սակաւ ինչ պիտանի: Զի որպէս հոգին մեծ է եւ պատուական, քան զմարմինն[22], նոյնպէս եւ կերակրելն[23] զհոգին վեհագոյն է, քան զմարմինն[24]: Վասն որոյ եւ ես իբրեւ ծանեայ զխնդիրս ձեր պատուելի բաբունապետ Յովհաննէս[25], եւ որք մի անգամ ընդ քեզ են[26] եղբարք[27], յոյժ ուրախացայ, զի բարի[28] եւ գովելի մասին[29] եղէք փափագաւղ[30]: Սակայն հայելով ի մտաց իմոց տկարութիւն եւ յիւր ողորմութեանցդ[31] մեծութիւն եւ բարձրութիւն՝ յոյժ զարհուրեցայ, զի զոր պահանջէքդ ի մէնջ, ի վեր է[32] քան զկար զաւրութեան իմոյ եւ միայն նոցա ձեռնարկելի, որք Հոգւովն Աստուծոյ զաւրացեալք՝ յաղթող գտան է. մահու չափ խորհրդոցն, եւ քրովբէաւրէն առաքինութեամբ զհին մարդն ի բաց մերկացան, եւ զնորն զգեցան: Որք սերմանեցին զարդարութիւն եւ հնձեցին զպտուղ կենաց եւ լուսաւոր արարին ինքեանք[33] զլոյս գիտութեան: Իսկ դուք[34] ի հնացեալ մեղաւք ծերունւոյ[35] եւ ի տատասկացան երկրագործէ պտուղ լուսոյ խնդրէք, եւ ի փշոց՝ խաղող, եւ յապառաժ վիմէ՝ ջուր, եւ ի կնիւնաբեր[36] հեղեղատէ՝ արդիւն ցորենոյ, եւ[37] ի յամուլ արգանդէ մտաց՝ ծնունդ իմաստութեան:*

*Այլ թէպէտ այսպէս է ճշմարտապէս, սակայն* «ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն[38]» (Մարկ. Թ. 22)*: Վասն զի որ-*

---

* Գ. վարդապետէ

** Զ > Եզնկացոյ

*** ԲԳԴ > Եզնկացոյ ասացեալ

**** Զ ութ

*****Բ խորհրդոյն, Դ խորհրդոց, Զ խորհրդուցն

6 ԳԴԶ > ի

7 Գ են

8 ԲԳԴ աներեւոյթն

9 Դ վեհագունին

10 ԲԳԴԵ միջակայուն

11 Ե այլքն

12 ԲԳ > եւ այլք նուաստագունիւն

13 Բ > Գ.

14 Դ > զի երեք են ճանապարհք փրկելոցն

15 Զ վարձկականն

16 Զ սբաղեալ

17 ԲԴ պէր

18 Ա ընդրեաց

19 ԴԵ բարձի

20 Գ Մարթայի

21 ԲԳ այնպէս

22 Զ զմարմին եւ կենաց պուտաղ նմին

23 Զ կերակրել

24 ԱԵ > նոյնպէս եւ կերակրելն զհոգին վեհագոյն է քան զմարմինն, Զ զմարմին

25 ԲԴԵԶ Յովաննէս

26 Ա > պապուելի րաբունապետ Յովհաննէս, եւ որք մի անգամ ընդ քեզ են, ԳԴ > են

27 Դ եղբայրք

28 Գ + է

29 ԳԴԵԶ մասինն

30 ԱԵ փափաքող, ԳԴԶ փափագող

31 ԱԵ յիրողութեանց, Զ յիրողութեանցդ ] յիւր ողորմութեանցդ

32 Գ > է

33 Ա > ինքեանք, Բ ինքնեանք, Զ ինքեանց

34 ԳԴ + վասն

35 Բ ծերունոյն

36 ԲԳԴ կիւնաբեր

37 Բ > եւ

38 Գ հաւատան

պէս[39] Աբրահամ[40] եւ Իսահակ հաւատովք եւ աղաւթիւք զամուլ արգանդ սեննկին Սառայի եւ Ռեբեկայ ծննդական արարին, նոյնպիսի յուսով եւ ես հաւատամ՝ աղաւթիւք ձերովք արձակիլ ի կապանաց ամլութեան մտաց որպէս նախ՝ Սառայ, եւ յետոյ՝ Աննայ, զի նոյն Տէր է նոցա եւ մեր՝ բաւական առ ամենեսեան, որ կարդան առ Նա: Վասն որոյ աւժանդակեցէք աղաւթից ձերոց թեւաւք փոքր մակուկի[41] մտաց մերոց, զի հողմով հոգւոյն ի նաւահանգիստն հասից կատարման՝ յաւգուտ լսաւղաց[42] եւ ի շինութիւն լրութեան Կաթուղիկէ[43] Եկեղեցւոյ՝ ի փառս եւ ի գովեստ Ամենասուրբ Երրորդութեանն[44], որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արդ[45], Ը.[46] են ամենայն խորհուրդք չարին, որով պատերազմի ընդ մարդկան հայրն չարեաց սատանայ:

Առաջինն[47]՝ որովայնամոլութիւնն[48]:
Երկրորդն՝ պոռնկութիւնն[49]:
Երրորդն՝ արծաթսիրութիւնն[50]:
Չորրորդն՝ տրտմութիւնն[51]:
Հինգերորդն՝ բարկութիւնն[52]:
Վեցերորդն՝ ձանձրութիւնն[53]:
Եւթներորդն[54]՝ սնափառութիւնն[55]:
Ութերորդն[56]՝ ամբարտաւանութիւնն:

Արդ, որպէս սեաւն եւ սպիտակն գոյնք մարմնոյ են եւ յորակ սեռէն են[57], այսպէս եւ առաքինութիւնն եւ չարութիւնն որակք են հոգւոյ[58]: Առաքինութիւնն[59] ամենայն[60] որպէս[61] սպիտակ, քանզի[62] լուսաւորիչ է հոգւոյ, իսկ չարութիւնն՝[63] որակ[64] սեաւ, զի խաւարեցուցանէ զհոգին եւ սեւացուցանէ:

Ախորժակն սեռ գոլով՝ բաժանի[65] ի չար եւ ի բարի: Իսկ չարն զարձեալ բաժանի[66] յերեք[67]՝ յորովայնամոլութիւն, յարծաթսիրութիւն, ի սնափառութիւն, զի սոքաւք մարտեաւ փորձիչն ընդ Տէրն[68] եւ յաղթահարեալ կործանեցաւ: Եւ լինին այսոքիկ Ը.՝ ծնեալ եւ աճեցեալ ի միմեանց. այս է՝ արծաթսիրութիւնն[69] եւ պոռնկութիւն՝ յորկորստութենէ, տրտմութիւնն[70], եւ[71] սրտմտութիւնն[72], եւ ձանձրութիւնն[73]՝ յարծաթսիրութենէ, ամբարտաւանութիւնն[74]՝ ի նորափառութենէ[75]: Այս է Ը. խորհուրդն Եւագրեայ[76], զոր վերոյգրեցաք[77]:

Իսկ առաքինութիւնն[78] երկրորդ[79] տեսակ է ախորժակացն եւ բաժանի քառակի, քանզի եռամասնեայ գոլով հոգի՝ ունի բան, ցասումն եւ ցանկութիւն[80]: Եւ բանականին առաքինութիւն[81] խոհեմու-

39 Գ վասն որոյ ] վասն զի որպէս
40 Զ Աբրայամ
41 ԳԴ մանուկի
42 Ա լսողացն, Գ լսողաց
43 ԲԳ կաթողիկէ
44 Դ Երրորդութեան
45 Զ եւ արդ
46 Զ ութ
47 Զ առաջին
48 ԳԴ որովայնամոլութիւն
49 ԲԳԴ պոռնկութիւն
50 ԲԳ արծաթսիրութիւն
51 ԲԵ փրփմութիւն
52 ԲԵ բարկութիւն
53 ԲԵ ձանրութիւն
54 ԳԶ եւթներորդ
55 ԳԵ սնափառութիւն
56 Զ ութերորդ
57 Ա > են

58 ԲԳ > առաքինութիւնն եւ չարութիւնն որակք են հոգւոյ, հմմտ. Դաւիթ Անյաղթ, Երկեր, թարգմանությունը, առաջաբանը եւ ծանոթագրությունները Ս. Ս. Արեւշատյանի, Երեւան, 1980, էջ 167:
59 Զ առաքինութիւն
60 ԱԵԶ > ամենայն, Գ ~ ամենայն առաքինութիւնն
61 Դ > որպէս, Զ իբրեւ
62 Գ սպիտակըն զի ] որպէս սպիտակ քանզի
63 ԴԶ չարութիւն
64 ԲԴԵ որակք, Զ որպէս
65 Դ բաժակի
66 ԲԳԵ որոշի, Զ փարորոշի
67 ԲԳ յԳ
68 Զ Տեառն
69 ԲԴԶ արծաթսիրութիւն
70 ԲԵԶ փրփմութիւն
71 Գ > փրփմութիւնն եւ
72 ԲԴԵԶ սրփմփութիւն
73 ԲԴԵԶ ձանձրութիւն
74 ԲԴԵԶ ամբարփաւանութիւն
75 Դ նորասնափառութենէ
76 Բ Եւաքրեայ
77 ԲԳԴ վերայգրեցաք
78 Գ առաքինութիւն
79 Գ երկորդ
80 ԲԳ ցանգութիւն
81 Զ առաքինութիւնն

*թիւնն[82] է, իսկ ցասմնականին[83] հեզութիւնն[84] է եւ արիութիւնն[85], իսկ ցանկականին[86] ողջախոհութիւնն է[87] եւ ժուժկալութիւնն[88]: Եւ բոլոր անձին առաքինութիւնն[89] է արդարութիւնն[90], եւ ազատականութիւնն[91], եւ մեծահոգողութիւնն[92]:*

*Իսկ չարութիւն է բանականին ըստ գերազանցութեան խորամանկութիւն[93] եւ ըստ պակասութեան անզգամութիւն[94]: Եւ ցասմնատեսակին ըստ առաւելութեանն[95] յանդգնութիւն[96], եւ ըստ նուազութեան երկչոտութիւն: Եւ ցանկականին[97] գեղխութիւն[98] եւ շռայլութիւն ըստ անչափութեան: Եւ[99] ըռըշտութիւն ըստ պակասութեան է չարութիւն: Եւ բոլոր անձինն չարութիւն է առաւել քան զչափն արդարութիւն[100], եւ ըստ պակասութեան՝ անիրաւութիւն[101], եւ անազատականութիւն, եւ փոքրահոգողութիւն[102], քանզի առաքինութիւնն[103] է միջինն, եւ աւելին եւ պակասն է չարութիւն: Եւ որպէս ասացաք, չորք են առաքինութիւնք[104] Հոգւոյ՝ խոհականութիւն[105], արիութիւն, ողջախոհութիւն, արդարութիւն:*

*Իսկ չարութիւնն Ը.՝ Դ.[106]՝ ըստ գերազանցութեան եւ Դ.[107]՝ ըստ պակասութեան: Եւ ըստ գերազանցութեան[108] է խորամանկութիւն[109], եւ յանդգնութիւն, եւ շռայլութիւն[110], եւ աւելի քան զչարն[111]՝ գողութիւն[112]: Իսկ ըստ պակասութեան՝ անզգամութիւն, երկչոտութիւն[113], ըռըշտութիւն, անիրաւութիւն:*

*Այս Ը. չարութիւնս յետ յանցանացն եմուտ ի մարդկային բնութիւնս, որ են[114] որովայնամոլութիւնն[115] եւ այլքն[116], զոր[117] հանդերձեալ եմք մի ըստ միոջէ[118] ասել շնորհաւք Հոգւոյն եւ զաւրութեամբ:*

*Եւ յառաջագոյն վասն որկորստութեանն[119] ասասցուք, զի նա է աղբիւր[120] ամենայն ախտից, զի ամենայն մահու մեռեալք ի սմանէ կատարեցան եւ նախքան զամենայն Ադամ, քանզի պատուիրեաց նմա Տէր Աստուած եւ ասէ.* «Յամենայն ծառոց, որ ի դրախտի այդր է՝ ուտելով կերիցես, բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի մի՛ ուտիցէք[121]» (Ծննդ. Բ. 16-17)*: Եւ նա, որկրաժետութեամբ[122] թողեալ զամենայն ծառս դրախտին, եկեր ի հրաժարեցուցեալ[123] պտղոյն, եւ մահու վիճակեցաւ իւրովք ծննդովքն[124]: Իսկ Ենովք պահաւք եւ ժուժկալութեամբ յանմահութիւն փոխեցաւ, եւ հաւատովք յաղթող գտաւ բնութեան մահու վճռին հատեալ յԱրարչէն, թէ՝* «Հող էիր[125] եւ ի հող դարձցիս» (Ծննդ. Գ. 19)*, եւ կենաց կարապետ եղեւ մարդկայինս ազգի[126]:*

*Իսկ յաւուրս Նոյի որովայնամոլութեամբ* «ուտէին, ըմպէին[127], կանայս առնէին եւ արանց լինէին» (Մատթ. ԻԴ. 38)*: Եւ ի մտանելն[128] Նոյի ի տապանն՝ եկն ջրհեղեղն եւ կորոյս զամենեսեան: Եւ Նոյ, որ պա-*

---

82 Գ խորհեմութիւնն
83 ԲԴԵԶ ցասմնատեսակին
84 Գ հեզութիւն
85 ԲԳԴԵԶ արիութիւն
86 Դ ցասմնականին
87 ԲԳ > է
88 ԲԳԴԵԶ ժուժկալութիւն
89 ԲԳԴԵԶ առաքինութիւն
90 Գ արդարութիւն
91 Գ ազատականութիւն
92 ԳԴ մեծահոգողութիւն
93 ԲԳԴ անզգամութիւն
94 ԱԲԳԴԵ > եւ ըստ պակասութեան անզգամութիւն
95 ԲԳԴԵԶ առաւելութեան
96 Դ երկչոտութիւն
97 Բ ցանգականին
98 ԳԶ զեխութիւն
99 Ա > եւ
100 Ա արդարութեան
101 Գ անիրաւութիւնն
102 Գ փոքրահոգողութիւնն
103 ԲԴԶ առաքինութիւն
104 Ա առաքինութիւն
105 Գ + եւ
106 Զ չորս
107 Զ չորս
108 Ա > եւ Դ. ըստ պակասութեան: Եւ ըստ գերազանցութեան

109 Գ խորամանգութիւն
110 Ա > եւ շռայլութիւն
111 ԱԴԵԶ զչափն
112 ԱԴԵԶ արդարութիւն
113 Գ երկչօտութիւն
114 Ա է
115 Գ որովայնամոլութիւն
116 ԲԴ այլք
117 ԳԴ զօր
118 Գ միոչէ
119 ԱԳ որկորստութեան
120 Ա աղբեր, Ե աղբեւր
121 ԱԵ ուտիցէս, ԴԶ ուտիցես
122 Ա որկրաժշտութեամբ, ԳԴԵԶ որկորաժետութեամբ
123 Բ հրախարեցուցեալ, Գ հրախառնեցուցեալ
124 Ա ծնովք
125 Դ է իբրեւ ] էիր
126 Բ մարդկայիս ազգիս, ԴԵԶ մարդկային ազգիս ] մարդկայինս ազգի
127 Գ ըմբէին, Ե ընպէին
128 ԲԴ մտելն, Ե մտանել

*հեաց զսրբութիւն եւ զկուսութիւն Շ.*[129] *ամ եւ հրամանաւն Աստուծոյ ամուսնացաւ եւ ծնաւ երիս որդիս եւ շինեաց զտապանն, նա միայն ապրեցաւ տամբ իւրով, եւ այլքն*[130] *ամենայն կորեան ի ջուրցն*[131] *հեղեղէ վասն զեղխութեան*[132] *եւ պոռնկութեան*[133]*: Գինին Նոյի անձեւութեան*[134] *պատճառ եղեւ եւ Քանանու անիծից: Եւ սոդոմայեցւոցն*[135] *կիզումն երկնատեղեաց բոցովն վասն փափկութեանն եղեւ, որպէս ասէ Եզեկիէլ*[136] *մարգարէ Իսրայէղի*[137]*, թէ՝* «Այս է անաւրէնութիւն Սոդոմայ[138] քեռ քո. ամբարտաւանութիւն[139] ի լիութեան[140] հացի եւ յղփութեան[141] գինւոյ՝ փափկանայր ինքն եւ դստերք իւր: Եւ ձեռն յաղքատն եւ ի տնանկն ոչ կարկառէին[142], մեծամտէին եւ գործէին անաւրէնութիւնս առաջի իմ, իբրեւ զայն տեսի՝ բարձի զնոսա» (Եզեկ. ԺԶ. 49-50)*: Եւ Տէրն*[143] *յԱւետարանն ցուցանէ զկործանումն*[144] *Սոդոմայ*[145] *վասն որովայնամոլութեան*[146] *եղեալ, քանզի ասէ, թէ՝* «Յաւուրսն Ղովտայ ուտէին, ըմպէին[147], գնէին, վաճառէին, տնկէին, շինէին» (Ղուկ. ԺԷ. 28)*: Եւ յորում աւուր ել Ղովտ ի Սոդոմայ*[148]*, տեղեաց հուր եւ ծծումբ յերկնից*[149] *եւ կորոյս զամենեսեան, քանզի ե՛ւ Ղովտ արբեցաւ, ե՛ւ զանասելի գործսն գործեաց: Եսաւայ կորուստ*[150]*, Իսրայէղի*[151] *սատակումն, որդւոցն Ահարոնի*[152] *կիզումն, Զամբրէի*[153] *մահ*[154] *եւ*[155] *Հերովդէի որոգայթ ըմբռնելով*[156] *երգմամբ*[157]*՝ ի գլխատումն Կարապետին եւ ի կորուստ անձին իւրոյ. չափաւորութիւնն եղեւ պատճառ ամենեցուն սոցա:*

*Իսկ պահքն եւ*[158] *ժուժկալութիւնն աստուածատես գործ է: Մովսէս, պահելով*[159] *զԽ.*[160] *տիւ եւ զԽ.*[161] *գիշեր*[162]*, ետես զԱստուած*[163] *եւ էառ զերկուսին*[164] *տախտակսն՝ գրեալ մատամբն Աստուծոյ: Եղիա, նոյն չափովն*[165] *պահելով*[166]*, ետես զԱստուած եւ հրեղէն կառաւք վերացաւ յերկինս: Դանիէլ եւ երեք*[167] *մանկունքն պահաւք*[168] *սանձեցին զբերանս առեւծուցն*[169] *եւ զհուրն շիջուցին: Ղազար, որ ցանկայր փշրանաց սեղանոյ*[170] *մեծատանն, ի գոգն Աբրահամու*[171] *զուարճանայր, եւ մեծատունն պապակեաց*[172] *ի բոց հրոյն կաթիլ*[173] *միոյ ջրոյ կարաւտանայր*[174]*, եւ ողորմածն Աբրահամ*[175] *ոչ տայր:*

*Յաղագս որովայնամոլութեանն*[176] *ամենայն մարգարէքն*[177]*, եւ Տէր մարգարէից, եւ առաքեալքն, եւ ամենայն սուրբք զգուշացուցանեն՝ երբեմն խրատեն, երբեմն վա՛յ տան եւ ողբան, եւ երբեմն սպառնան արբեցողացն եւ մարմնասիրացն: Եւ նախ Մովսէս ասէ.* «Գուցէ յորժամ ուտիցես եւ յագեսցիս[178], եւ տունս գեղեցիկս շինեսցես եւ բնակեսցես ի նմա, եւ բազմանայցէ արջառ[179] եւ ոչխար[180] քո[181], եւ ոսկի, եւ արծաթ, եւ ամենայն որ ինչ քո է, եւ հպարտանայցես

129 Զ հինկ հարիւր
130 ԲԴ այլք
131 Բ ջուցն, ջուրց
132 ԳԴԵ զեխութեան, Զ զեխութեանն
133 Զ պոռնկութեան
134 Գ գինին
135 Գ սոդոմայեցւոց, Ե սոդովմայեցւոցն
136 Ա Եզէկիէլ
137 Գ Իսրայէլի
138 Գ Սոդոմ, Ե Սոդովմայ
139 Ե անբարտաւանութիւն
140 Ե լիութիւն
141 ԱԵ յղփութիւն, Բ յի յղփութեան, ԳԴ յղբութեան
142 Ա կառկառէին
143 ԲԴ տէր
144 Ե զկործանում
145 Ե Սոդովմայ
146 Զ որովայնամոլութեանն
147 ԱԵԶ ընպէին, Գ ըմբէին
148 Ե Սոդովմայ
149 Գ ի յերկնից
150 Ե կորուստն
151 Գ Իսրայէլի
152 Գ Ահարօնէ, Զ Ահարովնի
153 ԲԴԵԶ Զամբրէ
154 ԳԵ մահն
155 ԲԳԵԶ > եւ

156 Ա ըմբռնելով
157 ԳԴԵԶ երգմամբն
158 Դ > եւ
159 ԲԳԴ > պահելով
160 ԵԶ զքառասուն
161 Զ զքառասուն
162 Գ + պահեաց
163 Գ ~ զԱստուած ետես
164 Դ զերկուսին
165 Գ չափ
166 ԱԳ պահելովն
167 ԲԳ գ.
168 ԲԳԶ պահաւքն
169 ԲԴԵԶ առիւծուց, Գ առիւծոցն
170 ԱԲԳԴ > սեղանոյ
171 Զ Աբրայամու
172 Դ փափագէր, Ե փափագեաց, Զ փափկակեց
173 Զ կաթի
174 ԲԳ > եւ մեծատունն... ջրոյ կարաւտանայր
175 Զ Աբրայամ
176 ԲԳ որովայնամոլութեան
177 ԲԴԶ մարգարէք
178 Գ յագեց
179 Ե առջառ
180 ԱԵԶ > եւ ոչխար
181 ԴԶ > քո

ի սրտի քում եւ մոռասցիս զՏէր Աստուած քո» (Բ Աւր. Ը. 12-13)***: Եւ դարձեալ ասէ.*** «Եկեր Յակոբ[182] եւ յագեցաւ, եւ անզուշեաց[183] սիրելին[184]. զիրացաւ, ստուարացաւ[185], լայնացաւ, եթող զՏէր Աստուած՝ զԱրարիչն[186] իւր եւ յետս[187] եկաց յԱստուծոյ Փրկչէ[188] իւրմէ» (Բ Աւր. ԼԲ. 15)***: Եւ Սողոմոն[189] ասէ՝ խրատելով[190].*** «Մի՛ լինիր արբեցող[191] եւ մի՛ ձկտիր ընդ հանգանակողս[192] մսոյ վաճառաց, քանզի ամենայն արբեցող[193] եւ բոզանոց աղքատասցի եւ զգեցցի[194] պատառատուն ամենայն քնէած[195]» (Առակ. ԻԳ. 20-21)***: Եւ յետ սակաւու[196] ասէ.*** «Ո՞ւմ է վայ, ո՞ւմ[197] խռովութիւնք[198], ո՞ւմ[199] դատաստանք, ո՞ւմ դժնդակութիւնք եւ վարանք[200], ո՞ւմ[201] վէրք տարապարտուց, ո՞յր[202] են կապուտակ ականողիք[203]: Ո՞չ ապաքէն այնոցիկ[204], որ յամենն[205] ի գինւոջ[206] եւ դիտենն[207] ուր գինարբուք լինիցին»: (Առակ. ԻԳ. 29-30)***: Եւ ասէ[208].*** «Մի՛ արբենայք գինով, այլ խաւսեցարուք ընդ մարդս արդարս: Ապա թէ ի տաշտս եւ ի[209] բաժակս արձակեսցես[210] զաչս քո, յետոյ շրջիցիս[211] մերկագոյն եւս քան զսանդիտառն: Եւ ի վախճանի իբրեւ զաւձահար տարածանիցիս, եւ իբրեւ իժի թիւնք[212] սփռեսցին» (Առակ. ԻԳ. 31-32)***: Եւ մարգարէն Եսայի[213] ասէ.*** «Վա՛յ այնոցիկ, ոյք յառնեն[214] ընդ առաւաւտս եւ զհետ լինին ցքոյն[215], որ երեկանան[216] ի նմին, զի գինին անդէն զնոսին իսկ[217] այրէ: Փողովք, եւ[218] թմբկաւ[219], եւ քնարաւ, եւ երգովք[220] զգինին ըմպեն[221] եւ ի գործս[222] Տեառն ոչ հային, եւ զգործս[223] ձեռաց Նորա ոչ առնուն ի միտ» (Ես. Ե. 11-12)***: Եւ յետ սակաւուց ասէ.*** «Վա՛յ հզաւրացդ ձերոց, որ ըմպեն[224] զգինին[225], եւ իշխանացդ, որ խառնեն[226] զցքին» (Ես. Ե. 22)***: Եւ Ինքն Տէրն[227] ասէ.*** «Վա՛յ ձեզ, որ յագեալդ էք, զի քաղցիցէք» (Ղուկ. Զ. 25)***: Եւ առաքեալն Պաւղոս ի Փիլիպեցւոց թղթին[228] ողբայ զնոսա եւ ասէ.*** «Բայց արդ եւ լալով իսկ ասեմ զթշնամեաց խաչին Քրիստոսի, որոց կատարածն[229] կորուստ է[230], որոց աստուած որովայնն[231] իւրեանց է, եւ փառք՝ ամաւթն[232] իւրեանց» (Փիլ. Գ. 18-19)***: Եւ ի Հռոմայեցւոց[233] թղթին[234] ասէ.*** «Մի՛ անառակութեամբ եւ արբեցութեամբ, մի՛ խառն անկողնաւք[235] եւ պղծութեամբ» (Հռոմ. ԺԳ. 13), ***զի արբեցութեանն խառն անկողինն[236] է լծակից[237], զի բազում խուիւ մեծ բոց արձակէ: Եւ յոլովութիւն կերակրոց բորբոքէ զհուր ցանկութեան[238] եւ սաստկէ զհոգին այրմամբ ախտին եւ ի հուր գեհենին արկանէ: Ի պակասել[239] փայտի[240] չիջանի հուր[241], եւ ի նուազել կերակրոց սպառին ախտք: Ի կորդացեալ եւ[242] ի խոպանացեալ[243] երկիր փո00F5շ եւ տատասկ բուսանի եւ ի***

182 ԵԶ Յակովբ
183 Զ անզուշնեաց
184 ԲԳ զսիրելին
185 Գ ստուարացոյ
186 Բ զԱրարիչ
187 Բ յետ
188 Դ Փրկչէն
189 Զ Սողովմոն
190 ԲԳԴԵԶ խրատ տայ ասելով ] ասէ խրատելով
191 Գ արբեցող
192 ԱԴԶ հանկանակողս
193 ԳԵ արբեցող
194 Ե զգեցի
195 ԱԲԳԴԵ քնած
196 ԲԳ սակաւ
197 ԲԳԴ + է
198 Գ խռովութիւնք
199 ԲԳ ումն
200 ԲԳ > ում դժնդակութիւնք եւ վարանք
201 ԲԳ ումն
202 Ա ումր, Ե ում
203 ԱԵ անողիք, Դ անկողինք
204 ԱԵ > այնոցիկ
205 Գ ամեն, Դ յամէնն
206 ԲԳ գինի
207 Գ դիտեն
208 ԲԳԴԶ + թէ
209 Ա > ի
210 ԴԵԶ արձակիցես
211 Ա շրջեսցիս
212 Ա թունք
213 Ա > Եսայի

214 Գ առնեն
215 Գ քցոյն
216 Ա եկանան, ԲԴԶ երեկանանն
217 ԲԳԴԵԶ ~ իսկ զնոսին
218 ԲԴ > եւ
219 Գ թմպկաւ
220 Գ երգօք
221 ԱԵ ընպեն, Գ ըմբեն
222 ԱԲԳԵ գործ
223 Բ գործս
224 ԱԵ ընպեն, ԳԴ ըմբեն
225 Գ զգինի
226 Գ խառեն
227 Բ Տէր
228 Գ թղխտին
229 Ե կատարած
230 Բ ~ է կորուստ, Գ > է
231 ԱԲԳԴ որովայն
232 Գ ամօթիւքն
233 Ե Հռովմայեցոց
234 Ա թխթին, Բ թխտին, Գ թղխտին
235 Դ անգողնաւք
236 ԳԴ անկողին
237 Գ լծակից է նորա ] է լծակից
238 Բ ցանգութեան
239 Գ պակասելն
240 Բ փայտ, Գ փայտին
241 Գ հուրն
242 ԲԳ > եւ
243 ԲԳ > ի խոպանացեալ

*միտս որովայնամոլից խորհուրդք չար ցանկութեան*[244] *եւ պոռնկութեան ծնանի եւ սնանի.* «Ոչ է մարթ[245] աղպաղպին պեղտոյ ջուր[246] քաղցր բղխել[247]» (Յակ. Գ. 12) *եւ ոչ գեղխից*[248] *եւ յարբեցողաց*[249] *մտաց*[250] *խորհուրդս բարիս ծնանել: Մէգ*[251]*, եւ մառախուղ, եւ ամպ ծածկէ զճառագայթս արեգականն*[252]*, եւ գոլոշիք*[253] *ըմպելեաց*[254] *եւ խորտկաց խաւարեցուցանէ*[255] *զլուսաւորութիւն մտաց:*

*Բերան*[256] *դուռն*[257] *է ընդ որ մտանէ մահկանացու կերակուրն եւ ելանէ անմահ բանն: Եւ որպէս պահես զբերանդ ի պահս ի կերակրոց*[258]*, նոյնպէս եւ զլեզուդ*[259] *ի չար բանից պահեա՛՝ ըստ մարգարէին, որ ասէ.* «Լռեցո՛ զլեզու քո ի չարութենէ, եւ շրթունք քո մի՛ խաւսեսցին[260] զնենգութիւն» (Սաղմ. ԼԳ. 14): «Զի որ բանիւ ոչ յանցանէ, նա՛ է մարդ կատարեալ» (Յակ. Գ. 2)*, որպէս ասէ Յակոբոս*[261] *Տեառնեղբայրն, զի մարդն տաճար է Աստուծոյ՝ ըստ առաքելոյ* (տե՛ս Ա. Կորնթ. Գ. 16, Բ. Կորնթ. Զ. 16)*:*

*Եւ է. դրունք են*[262] *այսմ տաճարի է.*[263] *զգայարանքն, եւ ձայնն, եւ սերականն, եւ թէ*[264]*՝ «Զամենայն դրունսն*[265] *զգուշութեամբ պահես, եւ զմի*[266] *դուռն անփոյթ առնես»: Զամենայն գանձն, որ կայ ի տունն, հանել կարէ գողն ընդ այն մի*[267] *դուռն*[268]*, եւ ոչինչ աւգուտ է*[269] *այլոց*[270] *փակելն: Վասն որոյ պարտ է զամենայն դրունսն զգուշութեամբ փակել եւ բանալ. սիրելեացն բանալ*[271] *եւ թշնամեացն*[272] *փակել*[273]*, այսինքն է՝ զակն պահել յարատ*[274] *հայելոյ, եւ զականջն խնուլ ի չար բանից լսողութենէ*[275]*, եւ զհոտոտելիսն՝ յանուշահոտութենէ*[276]*, եւ զլեզուն՝ ի չար խաւսելոյ, եւ զշաւշափելիքն՝ ի վնասակար շաւշափմանէ, զի շաւշափումն է դուռն*[277] *եւ մուտ ի մեղքն*[278]*: Զի որպէս Եւայ լուաւ ականջովն յաւձէն, թէ ուտես ի ծառոյն աստուածանաս, եւ հաւանեցաւ, բայց ոչ մերկացաւ*[279] *եւ ետես*[280] *աչաւքն, զի գեղեցիկ էր ծառն ի տեսանել, եւ քաղցր ի կերակուր, եւ հոտոտելեաւքն էառ զհոտ պտղոյն եւ ոչ վնասեցաւ: Իսկ յորժամ շաւշափեաց ձեռաւքն եւ եհատ զպտուղն եւ կերաւ, առժամայն մերկացաւ ի լուսոյն:*

*Այսպէս ամենայն մեղք ընդ շաւշափելիքն մտանէ ի մարդն, զի թէ տեսանես միս եւ լսես զանունն*[281] *եւ զհոտն առնուս, ոչ լուծանի պահքն, մինչեւ բերանովդ շաւշափես եւ ուտես: Այսպէս ամենայն մեղաց դուռն շաւշափելիքն է, նոյնպէս ձայնին եւ սերականին*[282] *մուտն է*[283] *ի մեղս: Եւ յորժամ պահես ի կերակրոց*[284] *զբերանդ, նոյնպէս եւ*[285] *զամենայն զգայութիւնդ պահեա՛: Եւ այն է ճշմարիտ պահք, որպէս յառաջագոյն ասացաք, քանզի որ զմի պատուիրանն*[286] *պահէ, զամենայնն*[287] *պահէ, եւ որ զմին*[288] *լուծանէ, զամենայնն*[289] *լուծանէ: Զի որպէս ոսկի շղթայք*[290] *ի մի-*

244 ԲԳ ցանկութեան, հմմտ. Վարք հարանց, էջ 642:
245 Գ մարդ ] է մարթ, Զ մարդ
246 Գ պեղց ջուրք ] պեղտոյ ջուր
247 ԲԳ բժել
248 ԳԴԶ զեխից
249 ԲԵ արբեցաւղաց, ԳԴԶ արբեցողաց
250 ԱԵ > մտաց
251 Ե մեգք
252 ԲԴԵԶ արեգական
253 Գ գոլոշիկ
254 Ա ընպելեաց, Գ ըմբելեաց
255 Գ խաւարեցուցանէ
256 ԳԶ բերանն
257 Բ դուռ
258 Գ ի պահոց կերակոյ ] ի պահս ի կերակրոց
259 ԱԳԴԵ զլեզուդ
260 Բ խաւսեսցին
261 ԲԵԶ Յակովբոս
262 ԲԳԵԶ ~ են դրունք
263 Զ Ե.
264 ԲԳԶ եթէ
265 Գ դրունս
266 ԲԳԴ մի
267 Գ մին
268 Դ դուռնն
269 ԲԳ աւգտէ ] աւգուտ է
270 ԲԳԴԵԶ այլոցն

271 ԲԳ > սիրելեացն բանալ
272 Գ ընդդէմ
273 Գ + եւ ընդ բարեկամին բանալ
274 ԲԳԴԵԶ ի յարատ
275 Գ լսելոյ, ԴԵԶ լսելութենէ
276 Գ յանուշահոտութենէ
277 Գ <է>
278 Գ մեղքնն
279 Գ մերկացոյ
280 Գ բայց ոչ ] եւ եպես
281 Բ զանուն
282 Դ սէրականին
283 Զ մուտ նայէ ] մուտն է
284 Գ կերակրոյ
285 ԲԳԴԵԶ > նոյնպէս եւ
286 Բ պատուիրան
287 ԴԶ զամենայն
288 ԳԴԵ զմինն
289 ԴԶ զամենայն
290 Ե շղխթայթք

***մեանս[291] յեռեալ են առաքինութիւնքն[292] եւ ոչ անջատին ի միմեանց, որպէս ասէ առաքեալն Պաւղոս, թէ՝*** «Ամենայն աւրէնք ի մի բան կատարին. սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (Գաղ. Ե. 14)*:* ***Եւ Յակոբոս[293] ասէ.*** «Որ ոք զամենայն աւրէնսն[294] պահիցէ եւ միով իւիք ինչ[295] գթիցէ, եղեւ ամենայն աւրինացն պարտական[296]։ Զի որ ասաց, թէ՝ մի՛ սպանանիցես[297], ասաց թէ՝ մի՛ շնայցես, զի եթէ[298] սպանանիցես ո՛չ՝ բայց շնայցես, եղեր յանցաւոր աւրինացն[299]» (Յակ. Բ. 10-11)*:* ***Այսպէս եւ չար չղթայքն մեղաց ի միմեանս ընդելուզեալ են, զի նախ որկրամոլութիւնն է, եւ զկնի նորա պոռնկութիւնն[300], եւ այլքն[301] ամենայն մի ըստ միոջէ, յորմէ փրկեսցէ զմեզ Քրիստոս եւ հասուսցէ[302] զմեզ յարքայութիւնն[303] Իւր, որ յերկինս է, որում փառք ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյն[304], այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:***

## ՆՈՐԻՆ[305] ՅԱՂԱԳՍ ՊՈՌՆԿՈՒԹԵԱՆ[306]

***Երկրորդ տախտակին[307] է.[308] պատգամացն գրեալ մատամբն Աստուծոյ, է առաջինն[309] ի յԵրկրորդ[310] Աւրէնսն[311]՝ Մի՛ շնայցես*** (Բ. Աւր. Ե. 17)***, իսկ յԵլիցն[312] առաջինն[313] է՝ Մի՛ սպանանիցես, եւ երկրորդն[314]՝ Մի՛ շնայցես[315]*** (Ելք Ի. 13-14)***, զի ցուցցէ[316], թէ շնութիւնն[317] եւ սպանութիւնն[318] ազգակից են միմեանց, զի բազում[319] սպանութիւն լինի ի շնութենէ, զի պոռնկին[320] եւ ոչ բերեն ի լոյս զմանուկն, այլ սպանանեն[321] վասն երկեղի[322] եւ ամաւթոյ: Եւ շնութիւն[323] է որ Հոգեւոր է եւ է որ մարմնաւոր:***

***Հոգեւոր շնութիւնն[324] է թողուլն զԱստուած եւ պաշտելն[325] զկուռս, որպէս ասէ Ովսէէ[326] ի դիմաց Աստուծոյ Իսրայէղի, որք թողին զԱստուած եւ պաշտեցին զկուռսն, թէ՝*** «Դատեցարո՛ւք ընդ մաւր ձերում, դատեցարո՛ւք, զի նա ոչ է[327] իմ կին, եւ ես ոչ եմ այր նորա. եւ բարձից զպոռնկութիւն նորա յերեսաց[328] իմոց, զի շնութիւն նորա միջոյ ստեանց իւրոց» (Ովս. Բ. 2)***. վասն կռապաշտութեանն[329] ասէ: Եւ Երեմիա[330] ասէ.*** «Շնայր ընդ փայտի եւ ընդ քարի» (Երեմ. Գ. 9)***, զի կուռքն փայտեղէն եւ քարեղէն[331] պատկեր էր[332], որ պաշտէին. շնութիւն զայն կոչէ[333]: Եւ դարձեալ՝ Հոգեւոր շնութիւն է, որ մտաւքն շնայ՝ ըստ Տեառն, որ ասէ.*** «Որ հայի ի կին առ ի ցանկանալոյ[334] նմա, անդէն շնացաւ ընդ նմա[335] ի սրտի իւրում» (Մատթ. Ե. 28)*:*

***Իսկ մարմնաւոր պոռնկութիւնն՝ յաւքնագլուխ[336] է[337], քանզի[338] է որ բնական է եւ է որ արտաքոյ բնութեան[339]: Բնական է, որ ընդ կնոջ շնայ, եւ արտաքոյ բնութեան[340] է արուագիտութիւնն[341], անասնամոլութիւնն[342], մծղնագործութիւնն[343], որ առաւել է քան զամենայն***

291 ԲԳԴ միմեանց
292 Գ առաքինութիւնք
293 ԲԵԶ Յակովբոս
294 Գ օրէնս
295 ԲԳ > ինչ
296 Զ պարտապան
297 Գ սպանիցես
298 Զ թէ
299 Գ Աստուծոյ
300 Գ պոռնկութիւն
301 Դ այլք
302 ԱԲԳԴԵ զերծուսցէ
303 ԲԴ յարքայութիւն
304 Գ Հոգւոյդ
305 ԲԳԴԵ + Կիրակոս վարդապետի
306 ԲԴ շնութեան, Գ յաղգս ապաշխարութեան ] յաղագս պոռնկութեան
307 Գ տախտակն
308 ԲԳԴԵ Ե., Զ հինգ
309 ԲԳԴԶ առաջին
310 ԲԳ երկրորդ ] ի յերկրորդ
311 Գ օրէնս
312 ԴԶ ի յԵլիցն
313 ԲԳԴԵԶ առաջին
314 Զ երկրորդ
315 ԲԳԴԶ շնայցես
316 Գ ցուցէ
317 Գ շնութիւն
318 ԲԳԴ սպանութիւն
319 Բ բում
320 Գ պոռնկին
321 Դ սպանեն
322 Ե երկիղի
323 ԲԴԵ շնութիւնն
324 ԲԳԴԶ շնութիւն
325 ԱԳ պաշտել
326 ԱԵ > Ովսէէ
327 ԲԳ > է
328 Գ երեսաց
329 Գ կռապաշտութեան
330 Ա Երէմիա, Գ Երեմիաս
331 ԱԲ > քարեղէն
332 Գ պատկերք էին ] պատկեր էր
333 Գ ասէ
334 Բ ցանգանալոյ
335 ԱԵ > ընդ նմա
336 ԱԴԶ յոքնագլուխ, Գ յոգնգլուխ
337 ԱԳ > է
338 Գ քան
339 Գ > բնական է, եւ է որ արտաքոյ բնութեան
340 Գ + որ, Դ բնութիւն
341 Գ արուագիտութիւն
342 Գ անասնամոլութիւն
343 Ա մծղնագործութիւն

***մեղս եւ սոդոմայեցւոց[344] հրոյն արժանաւոր[345]:***

***Եւ դարձեալ՝ ազգապղծութիւնն[346] սոցին նման է, զոր եւ Ովսէէ[347] մարգարէն ընդ այլ ամենայն չարեացն եւ զազգապղծութիւնն[348] ի վեր[349] դնէ ամենեցուն իբրեւ առաւել չար եւ ասէ, թէ՝*** «Ո՛չ գոյ ճշմարտութիւն, ո՛չ ողորմութիւն եւ ո՛չ գիտութիւն Աստուծոյ ի վերայ երկրի: Անէծք, եւ ստութիւն, եւ սպանութիւն[350], եւ գողութիւն, եւ շնութիւն[351] հեղեալ[352] ի վերայ երկրի, զի արիւն ընդ արիւնս խառնեն[353]» (Ովս. Դ. 1-2). ***«արիւն ընդ արիւնս[354] խառնեալն[355]» զազգապղծութիւնն ասէ: Եւ ասէ, թէ՝*** «Վասն այսորիկ[356] սուգ առցէ երկիր, եւ նուազեսցի ամենայն բնակչաւք հանդերձ, եւ գազանաւք անապատի, եւ սողնաւք[357] երկրի, եւ թռչնաւք[358] երկնից, եւ ձկունք ծովու պակասեսցին: Զի ոչ ոք իցէ, որ դատիցէ եւ յանդիմանիցէ» (Ովս. Դ. 3-4)*:* ***Զի ազգապղծութիւնն հանապազ պոռնկութիւն է եւ ոչ ամուսնութիւն եւ աշխարհի աւերումն[359], քանզի*** «զամենայն մեղս, զոր[360] գործէ մարդ, արտաքոյ մարմնոյ իւրոյ է: Իսկ որ պոռնկին՝ ի[361] յիւր[362] մարմին մեղանչէ»,- ***ասէ առաքեալն[363]*** (Ա. Կորնթ. Զ. 18)*:* ***Եւ դարձեալ ասէ.*** «Ո՛չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի» (Ա. Կորնթ. Զ. 15)*:*

***Արդ, առեալ զանդամս Քրիստոսի[364]՝ առնիցեմք անդամս պոռնկի՞[365], քա՛ւ լիցի: Ոչինչ սարսափելի իբրեւ զբանս զայս է. ոչ ասաց[366]՝ առեալ զանդամս Քրիստոսի՝ մերձեցուցից ի պոռնիկ[367], այլ զի՞նչ արարից պոռնկի անդամս, որ է ահաւորագոյն, ապա ցուցանէ, եթէ[368] զիա՞րդ լինի[369] այն.*** «Ո՛չ գիտէք եթէ[370] որ մերձենայ ի պոռնիկն, մի մարմին է» (Ա Կորնթ. Զ. 16)*,* ***զի գրեալ է յԱւրէնսն.*** «Եղիցին[371] երկոքեանն[372] ի[373] մարմին մի» (Ծննդ. Բ. 25). ***ոչ թողու ուրեմն մերձաւորութիւնն[374] երկուցն լինել յերկուս[375], այլ զԲ.-ն[376] մի՛ գործէ, զի «չնացող» կոչին երկոքին, եւ*** «շունք զարքայութիւնն[377] Աստուծոյ ժառանգել[378] ոչ[379] կարեն» (Ա Կորնթ. Զ. 9-10)*:*

***Պիղծ[380] է պոռնկութիւնն[381] եւ ամենայն ախտք[382], բայց եւս առաւել արուամոլութիւնն[383] եւ անասնագիտութիւնն[384], զի թէ՝*** «Որ մերձենայ ի պոռնիկն, մի մարմին է» (Ա Կորնթ. Զ. 16)*,* ***ապա որ յանասուն մերձենայ, անասուն է, որպէս ասէ մարգարէն Դաւիթ.*** «Հաւասարեաց անասնոց անբանից եւ նմանեաց նոցա» (Սաղմ. ԽԸ. 13)*:* ***Եւ առաքեալն Պաւղոս[385] ասէ.*** «Մատնեաց զնոսա Աստուած ի կարիս անարգութեան[386], զի էգք նոցա փոխանակեցին զպէտս բնականս[387] ի պէտս անբնականս: Նոյնպէս եւ արուացն, թողեալ զբնական պէտս իգութեան, բորբոքեցան ցանկութեամբք[388] իւրեանց ի միմեանս. արուք[389] ընդ արուս զխայտառակութիւն[390] գործէին[391], եւ զդարձ[392] փոխարինին, որ պարտ էր մոլորութեան նոցա՝ յանձինս իւրեանց ընդունէին» (Հռոմ. Ա. 26-27)*:* ***«Բորբոքեցան» յաճախութիւնն[393] ասէ, որպէս ասէ Յոհան Ոսկիբերանն[394]: Զորաւրինակ՝***

344 ԳԵ սոդովմայեցոց
345 Բ ժառանգօր, Գ ժառանգորդ, Դ ժառանկատր
346 ԱԲ զազգապղծութիւնն, Գ ազգապղծութիւն
347 Գ Մովսէս
348 Գ զազգապղծութիւն
349 ԲԳԴԶ վերայ
350 Ա ~ եւ սպանութիւն, եւ ստութիւն
351 ԱԵ > եւ շնութիւն
352 ԲԳԵԶ + է
353 Գ խառնակին, Դ > արիւնդ ընդ արիւնս խառնեն
354 Զ արիւն
355 ԲԴԶ խառնել
356 ԲԳԴԵԶ այնորիկ
357 Գ սողունք
358 Գ թռչունք
359 Գ սերումն, Դ աւիրումն
360 Դ որ, Ե > զոր
361 ԵԶ > ի
362 Ա իւր ] ի յիւր
363 Զ առաքեալ
364 Ա <առեալ զանդամս Քրիստոսի>
365 ԲԳ Քրիստոսի
366 ԱԵ > ասաց
367 Գ պոռնիկն
368 ԴԶ թէ
369 ԲԳ լինիցի
370 ԴԶ թէ
371 ԲԳԴԶ + ասէ
372 ԲԳ երկոքեան, Ե երկոքին
373 ԴԶ > ի
374 Գ մերձաւորութիւն
375 ԲԳԴԵԶ երկուս
376 ԱԴԵ զԲ., Գ զերկուն, Զ զերկուսն
377 ԲԳ զարքայութիւն
378 Ա ժառանկել
379 Գ ~ ոչ ժառանգել
380 ԲԳԴԵ պեղծ
381 Գ պոռնկութիւն
382 Բ ախտքս
383 ԳԴԵԶ արուամոլութիւն
384 Բ անասնայգիտութիւն, ԳԴԵԶ անասնագիտութիւն
385 Գ Պողոս
386 Գ անարգութիւն
387 ԲԳ բնական
388 ԲԳ ցանգութեամբք
389 Դ արուգ
390 Գ զխայտարակութիւն
391 Գ գործէէին
392 ԲԳԴ դարձեալ
393 ԲԴԶ զյաճախութիւնն, Գ զյաճախութիւն
394 ԲԳԴ Ոսկէբերան, Զ Ոսկիբերան, հմմտ. Творение иже во святых отца нашего Иоанна Златоуста, Архиепископа Константинопольского, СПБ, 1903, Т. 9, էջ 516-520:

եթէ ոք[395] թողու զկերակուր, եւ հող եւ ուտիճ[396] ուտիցէ, եւ զջուր թողեալ[397]՝ տիղմ ըմպիցէ[398], այսպէս եւ նոքա արտաքոյ բնութեան[399] եռային[400]: Եւ ուստի՞ եղեւ անժուժկալութիւնս այս՝ յԱստուծոյ[401] ի ձեռաց թողլոյն: Եւ ի ձեռաց[402] թողուլն[403] ոչ այլ ուստէք լինի, բայց ի չար մտաց նոցա. «Արուք ընդ արուս զխայտառակութիւն[404] գործէին» (Հռոմ. Ա. 27), գործ իսկ արարին զմեղսն, զի ոչ ցանկութիւն[405] ասաց տիրապէս, քանզի եւ զբնութիւնն իսկ[406] թշնամանեցին[407] եւ զաւրէնսն առ ոտն հարին: Աստուած զայրն եւ զկինն մի[408] մարմին արար, եւ սատանայ զմինն[409] յերկուս[410] բաժանեաց: Զնոյն զայր[411] եւ զկին[412] զերկոսեանն ընդ միմեանց զինեաց սատանայ՝ կանայք զկանայս թշնամանել, եւ արքն[413] միմեանց հակառակ յառնէին որպէս սողոմայեցիքն[414], եւ զդարձ[415] փոխարինին, որ պարտ էր մոլորութեանն[416] նոցա, յանձինս իւրեանց ընդունէին: Զհուրն յերկնից ընդունէին[417]՝ անձրեւեալ հանդերձ ծծմբով[418], զի չար էր[419] արուագիտութիւնն[420] քան զմարդասպանութիւնն, զի մարդասպանն զհոգին ի մարմնոյն բաժանէ, զոր Արարիչն դարձեալ վերստին նորոգէ: Եւ արուագէտն զհոգին եւ զմարմինն[421] կորուսանէ՝ զիւրն[422] եւ զգործակցին իւրոյ եւ անշէջ հրոյն եւ գեհեննին[423] մատնէ[424]. «Ուր հուրն ո՛չ շիջանի, եւ որդն ո՛չ մեռանի» (Մարկ. Թ. 47), զի չէ՛ եւ չէ՛ իսկ մեղք ծանրագոյն քան զարուագիտութիւնն:

Եւ որ կամի Աստուծով ազատիլ ի պոռնկութենէ եւ ի[425] յարուագիտութենէ, թէ[426] աշխարհական է՝ աւրինաւքն[427] Աստուծոյ[428] ամուսնասցի, զի «պատուական է ամուսնութիւն[429] եւ սուրբ են անկողինքն,- ասէ առաքեալն,- բայց զշունս եւ զպոռնիկս[430] դատի Աստուած» (Եբր. ԺԳ. 4): Իսկ եթէ կուսան[431] է կամ կրաւնաւոր, զնիւթ[432] ցանկութեանն[433] հատցէ[434], զի նիւթ հրոյ[435] փայտ է, եւ եղէգն[436], եւ խռիւ[437], եւ ի սոցանէ[438] պակասեալն շիջանի հուր[439]: Եւ նիւթ ցանկութեան[440] բոցոյն է կերակուր[441] եւ ըմպելի[442]՝ հանդերձ զեղխութեամբ[443], եւ շռայլութեամբ, եւ հանգիստ, եւ անգործ կալն, եւ խաւսք, եւ տեսութիւն[444] կանանց, եւ սոքա[445] վառեն[446] զհուր[447] ցանկութեանն[448]: Եւ եթէ կամիս շիջուցանել զհուր ցանկութեան[449] բոցոյն, զսոսա՛ յապաւեա, քանզի ասէ «միտքն անապատի» Եւագրիոս[450], թէ՝ «Ցանկութիւնն[451] եռացեալ սոնքացեալ թարշամեցուցանէ քաղց եւ վաստակ[452]», այսինքն է՝ աշխատանք: Եւ մեկնութիւն, որ է հեռանալն[453] ի կա-

395 Գ ոչ
396 Ջ խիճ
397 Գ զջուր թողու ] զջուր թողեալ
398 Գ փիղմն ըմբիցէ ] փիղմ ըմպիցէ, Դ > եւ զջուր թողեալ՝ փիղմ ըմպիցէ, Ջ ընպիցէ
399 ԲԳԴԵ բնութեանն
400 ԲԴԵՋ եռացին, Գ երաին
401 Գ Ասփուծոյ
402 Դ > թողլոյն եւ ի ձեռաց
403 Ա > եւ ի ձեռաց թողուլն, Գ թողլոյն
404 Ե զխայտառակութիւնն
405 ԲԳ ցանգութիւն
406 Ե > իսկ
407 ԲԳ թշնամեցին
408 Ե > մի
409 Գ մինն
410 Բ յԲ., Դ յԲս
411 ԳԴԵՋ այր
412 ԳԴԵՋ կին
413 ԲԳ այրքն, Ե արք
414 Գ սողոմացիքն, Ե սոդովմայեցիքն
415 ԲԳԴ դարձեալ
416 ԲԳԴՋ մոլորութեան
417 ԲԳԴԵՋ > ընդունէին
418 Դ ծծմովք
419 ԲԳԴԵՋ է
420 Գ արուագիփութիւն
421 Ա զմարմին
422 Բ զիւր
423 Բ գենին
424 Գ ի մափնէ
425 ԲԳԴԵՋ > ի
426 ԲԳԴՋ եթէ
427 Դ աւրինաւք
428 Ե > Ասփուծոյ
429 ԲԳԴՋ ամուսնութիւնն
430 Գ պոռնիկս
431 Գ կուսասն
432 Գ զնիւթն
433 ԲԳ ցանգութեանն, Ե ցանկութիւնն
434 Դ հափցէէ
435 ԲԳ հրոյն
436 ԴՋ եղեգն
437 Բ խռի
438 Գ սոց, Դ սոցա
439 ԳԵ հուրն
440 Բ ցանգութեան
441 Գ կերակուրն
442 Գ ըմբելին, Ջ ըմպելին
443 ԴԵՋ զեխութեամբ
444 Դ փեսութիւնն
445 Դ նոքա
446 Գ վարեն
447 Ջ զհուր
448 Բ ցանգութեանն, ԳԴՋ ցանկութեան
449 ԱԵՋ բնութեան, ԲԳ ցանգութեան
450 Բ Եւաքրիոս
451 ԲԳ զցանգութիւն, Դ ցանկութիւն, ԵՋ զցանկութիւն
452 Ջ վասփակք, Եւագր Պոնփացի, էջ 31:
453 ԲԳԴԵ հեռանալ

***նանց, եւ ի մանկանց[454], եւ ի խաւսից նոցա, զի ասէ Հայրն Նեղոս, թէ՝ «Իւղ[455] լուցանէ[456] զլապտեր Հրոյ, եւ զարծարծումն ցանկութեանց[457] բորբոքէ[458] խաւսք կանանց»[459]: Իսկ Սողոմոն[460] զբազմապատիկ որոգայթս կանանց ասէ, եթէ[461]՝*** «Մոլորեցոյց զնա[462] բազում խաւսիւք, եւ խեղդիւք շրթանց իւրոց վարանեաց զնա[463], եւ նա գնաց զկնի նորա յիմարեալ[464]՝ իբրեւ զարջառ[465] ի սպանումն, եւ իբրեւ զշուն պոռամբ կամ իբրեւ զեղջերու[466] հարեալ նետիւ ի լերդակողմն[467]. եւ փութայ իբրեւ զհաւ ի ծուղակս[468], եւ ո՛չ[469] գիտէ եթէ զհոգին հալածական փանիցի» (Առակ. Է. 21-23)***: Եւ խրատ տայ եւ ասէ.*** «Արդ, լո՛ւր ինձ[470], որդեա՛կ[471], եւ անսա՛ բանից բերանոյ իմոյ: Մի՛ խոտորեսցի սիրտ քո ի ճանապարհս նորա, եւ մի՛ մոլորիցիս[472] ի շաւիղս նորա: Զի զբազումս պապասպ արկեալ է նորա խոցոտելով[473], եւ անթիւ են սպանեալքն ի նմանէ: Ճանապարհք դժոխոց են տուն նորա, որ իջուցանեն յշտեմարանս[474] մահու» (Առակ. Է. 24-27)***: Եւ առաքեալն Պաւղոս Տիմոթէի[475] պատուիրէ, թէ՝*** «Ի մանկամարդացն[476] հրաժարեա՛, զի յորժամ խայտան զ-Քրիստոսիւ, ամուսնանալ կամին» (Ա. Տիմ. Ե. 11)***: Վասն որոյ զգուշացի՛ր, որդեա՛կ[477], զի մեծ որոգայթ են կանայք եւ որսան զմարդիկ ի կորուստ, զի թէ զԱդամ իւրն կորոյս, աւտարն զիա՞րդ ապրեցուսցէ զքեզ: Եւ թէ[478] զԴաւիթ պատրեաց կինն Ուրիայ, որ ունէր զՀոգի պետութեան եւ մարգարէութեան, որում Աստուած վկայեաց, թէ՝*** «Գտի զԴաւիթ ծառայ իմ[479] որդի Յեսսեայ[480] այր ըստ սրտի իմում, որ արասցէ զամենայն[481] կամս իմ» (Գործք ԺԳ. 22)***: Դու զիա՞րդ ապրեսցիս ի Հաղբից կանանց՝ մերձ կալով առ նոսա: Վասն որոյ փախի՛ր ի Սողոմայ[482], փախի՛ր ի Հրկիզութենէ, ի լեառն զերծի՛ր, ասէ Աստուածաբանն Գրիգորիոս[483], թէ[484] լաւ է ի Հուր մերձենալ, քան ի կին, զի ի Հրոյն վաղվաղակի ընդոստնուս եւ զգուշանաս, իսկ ի կանանց խաւսից եւ ի տեսութենէ մեղկեալ ոչ կարես դիւրաւ զերծանել:***

***Սողոմոն[485] յԱստուծոյ իմաստնացաւ[486] առաւել քան զամենեսեան, որ յառաջ քան զնա էին, եւ որք յետ նորա: Կանայքն յԱստուծոյ աւտարացուցին եւ ի գրկացն[487] Աստուծոյ Հանին, եւ լալի եւ ողորմելի արարին: Այլ դու զգո՛յշ[488] լեր ի կանանց եւ նախքան զամենայն յորովայնամոլութենէ, զի թէ առաքեալն Պաւղոս ճնշէր զմարմինն եւ Հնազանդեցուցանէր, ապա դու մի՛ պարարեր զմարմինդ, այլ ճնշեա՛ սանձաւք պահոց, զի մի՛ գիրացեալ եւ[489] ոռնքացեալ ընկեսցէ զՀեծեալն ի վիՀ պոռնկութեան, քանզի ասէ առաքեալն[490].*** «Մի՛ պոռնկեսցուք, որպէս ոմանք ի նոցանէ եւ անկան ի միում աւուր ԻԴ. Ռ.[491]» (Ա Կորնթ. Ժ. 8)***: Եւ դարձեալ ասէ.*** «Մի՛ խաբիք. ո՛չ պոռնիկք, ո՛չ կռապարիշտք[492], ո՛չ շունք, ո՛չ իգացեալք[493], ո՛չ արուագէտք եւ այլքն[494] ըստ կարգի զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն» (Ա Կորնթ. Զ. 9-10), ***զի Աստուած սուրբ է եւ զսրբութիւնն[495] սիրէ, քանզի ասէ Աստուած.*** «Եղերո՛ւք սուրբք, զի Ես սուրբ եմ» (Ղեւտ. ԺԹ. 2, Ա. Պետ. Ա. 16)***: Վասն որոյ ջանացարո՛ւք ընդ նեղ դուռն մտանել[496], քանզի նեղ է դուռն, եւ անձուկ[497] է[498] ճանա-***

454 Ա > ի մանկանց
455 Ե եւղ
456 ԲԳԴԶ բուծանէ
457 ԲԳ ցանգութեանց
458 Ա բորբոքումն
459 Վարք հարանց, էջ 644
460 Ե Սողովմոն
461 ԲԳ թէ
462 ԱԵ զնոսա
463 Ա զնոցա
464 Գ յիմարիլ
465 Գ զառջառ
466 Ե զեղջեւրու, Գ զեղջրու
467 Բ լերդակող մնն
468 Գ ծօղ ակն, Ե ծող ակս
469 Գ > ոչ
470 Ա > ինձ
471 Գ որդեակք, Զ > որդեակ
472 Ա մոլորեսցիս
473 Ա խոցոտել
474 ԴԵ յիշտեմարանս
475 ԲԳ Տիմոթեայ, Ե Տիմօթեայ, Զ Տիմոթիայ
476 ԱԲԳԵ մանկամարտացն
477 Գ որդեակք
478 ԲԳԴԵԶ եթէ
479 Զ > ծառայ իմ

480 Դ Յեսեա
481 Գ ամենայն
482 Ե Սոդովմայ
483 Творения иже во святых отца нашего Григория Богослова, Т. 3, Москва, 1844, էջ 289-290:
484 ԲԳԴԶ զի
485 Ե Սողովմոն, Զ + որ
486 Գ իմաստնացոյ
487 Ե զրգացն
488 ԳԴԵ զգուշ
489 Ե > եւ
490 ԴԵԶ առաքեալ
491 ԲԵ Ի. եւ ԴՌ., Դ Ի. եւ Դ. Ռ., Զ քսան եւ չորս հազար
492 Գ կրապարիշտք
493 Դ իգացեալ
494 ԱԵ յայլքն, Գ այլ
495 ԲԳ զսրբութիւն
496 ԲԴԶ ~ մտանել ընդ նեղ դուռնն, Գ > մտանել
497 Բ անձուկ, Գ արձակ
498 ԴԵԶ > է

*պարհն[499], որ տանի յանախտութիւն[500], եւ նովաւ ի կեանս: Լայն է[501] դուռն, եւ արձակ ճանապարհն[502] գեղխութեան[503] եւ որովայնամոլութեան, որ տանի ի պոռնկութիւն, եւ նովաւ ի կորուստ գեհեննին[504]: Յաղագս[505] այնորիկ ասէ Տէրն.* «Զգո՛յշ[506] լերուք, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ, եւ արբեցութեամբ, եւ հոգաւք աշխարհականաւք, եւ յանկարծակի հասանիցէ[507] ի վերայ ձեր աւրն այն, զի իբրեւ որոգայթ հասանիցէ ի վերայ ամենեցուն, որ բնակեալ են ընդ ամենայն երեսս երկրի» (Ղուկ. ԻԱ. 34-35), *զի արժանի լինիջիք զերծանել յայնմ ամենայնէ, որ լինելոցն[508] է, եւ կալ առաջի Որդւոյ Մարդոյ, եւ լսել զերանաւէտ բարբառն[509], եթէ՝* «Եկա՛յք աւրհնեալք Հաւր իմոյ, ժառանգեցէ՛ք պատրաստեալ ձեզ զարքայութիւնն ի սկզբանէ աշխարհի» (Մատթ. ԻԵ 34), *եւ փառաւորել[510] զՀայր, եւ զՈրդի, եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

## ՆՈՐԻՆ[511] ՅԱՂԱԳՍ ԱՐԾԱԹՍԻՐՈՒԹԵԱՆՆ[512]

«Արմատ ամենայն չարեաց զարծաթսիրութիւնն[513],– *ասէ առաքեալն Քրիստոսի Պաւղոս,–* որում ոմանց[514] ցանկացեալ[515] վրիպեցան ի հաւատոց եւ զանձինս արկին ընդ բազում ցաւաւք[516]» (Ա Տիմ. Զ. 10)*: Զի որպէս ծառ եթէ հատցես[517] զոստսն[518], բազում շառաւիղս[519] արձակեսցէ[520] քան զառաջինն, քանզի արմատն հաստատեալ է յերկրի եւ ոչ տայ թոյլ չորանալ[521]: Այսպէս եւ ի հատանել այլ ախտիցն ոչինչ աւգտին, զի բաւական է արծաթսիրութիւնն միայն կորուսանել զհոգին եւ չտայ այլ[522] ախտիցն ազատ լինել, այլ ամենայն ախտիցն արմատ է, եւ ամենայն ախտքն[523]՝ ոստք[524] եւ շառաւիղքն[525] սորա: Աւրինակ քեզ Յուդայ, զի առաքեալ էր Քրիստոսի եւ ազատ յամենայն[526] ախտից եւ սքանչելագործ իբրեւ զայլ առաքեալսն, այլ արծաթսիրութիւնն կորոյս զնա: Նոյնպէս յառաջ քան զսա Աքար գող, որ կորեաւ[527] ամենայն տամբն՝ քարկոծեալ վասն գողութեանն:*

*Ո՛վ մարդ, յիշեա՛, զի յորժամ ծնար, մերկ ծնար եւ մերկ ելանես, յորժամ մեռանիս.* «Զի ոչինչ բերաք յաշխարհս, եւ ոչ փանել ինչ կարասցուք, ըստ առաքելոյ, այլ ունիմք կերակուր եւ հանդերձ[528], եւ այնու շատասցուք: Իսկ որք կամին մեծանալ, անկանին[529] ի փորձութիւն, եւ յորոգայթ[530], եւ ի բազում ցանկութիւնս[531] անմիտս եւ վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ[532] ի սատակումն եւ ի կորուստ» (Ա Տիմ. Զ. 7-9), *քանզի յԱստուծոյ ծառայութենէն[533] հանէ, եւ փոխանակ Աստուծոյ զմամոնայն պաշտել տայ, որպէս Տէրն[534] իսկ հրամայէ.* «Ո՛չ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի» (Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13)*. զի որ սիրէ զարծաթ, ատէ զԱստուած: Եւ որպէս հուր եւ խռիւ անհնար է ի միում ծրարոցի բնակել, նոյնպէս ե՛ւ սէրն Աստուծոյ, ե՛ւ սէր ընչիցն: Զի եթէ սէրն Աստուծոյ եմուտ ի ծրարոցն, սպառեցաւ արծաթն, եւ եթէ սէր[535] արծաթոյն գրաւեցաւ[536] սիրտն, ջնջեցաւ սէրն Աստուծոյ ի սրտէն, զի զի՞նչ է հաւասարութիւն[537] սիրոյ լուսոյն[538] եւ ագահութեան խաւարին, քանզի անիծեալ են, որք պաշտեն զկուռս: Նոյնպէս եւ արծա-*

499 Ե ճանապարհ
500 Գ յարքայութիւնն, Ե ի յանախտութիւն
501 Գ > է
502 ԴԵ ճանապարհ
503 ԴԶ զեխութեանն
504 Դ գեհենի
505 Գ յաղգս
506 Դ զգուշ
507 Բ հանիցէ
508 Զ լինելոց
509 Բ բարբառ
510 Ե փառաւորեալ
511 Բ + Կիրակոսի վարդապետի, ԳԴ + Կիրակոս վարդապետի, Ե + Կիւրակոս վարդապետի
512 ԴԵ արծաթսիրութեան
513 Գ զարծաթսիրութիւն է, Դ արծաթսիրութիւնն, Զ արծաթսիրութիւն
514 Դ ոմանք
515 Բ ցանգացեալ
516 Զ ցաւովք
517 ԲԳԴԵԶ հատանես
518 Ե զոստն
519 ԲԴԵԶ շառաւեղս, Գ ճիւղս
520 ԲԳԴԵԶ արձակէ
521 Հմմտ. Վարք հարանց, էջ 647-648:
522 ԳԶ յայլ
523 ԲԳ ախտք, Ե ախտիցն
524 Զ ոստ
525 ԲԴ շառաւիղ են, Գ ճիւղք է, ԵԶ շառաւեղ են
526 Դ ամենայն
527 Գ կորեցաւ
528 Զ > եւ հանդերձ
529 ԲԳ անգանին
530 Գ յորօգայթ
531 Բ ցանգութիւնս, Գ ձանկութիւնս
532 Գ զմարդիկք
533 Դ ծառայութենէ
534 Դ Տէր
535 ԲԳԴ սէրն
536 ԲԴԵԶ գրաւեաց, Գ գրաւեալ
537 ԲԳԴԶ ~ հաւասարութիւն է, Ե + է
538 Ե լուսոյ

***թաւէրքն***[539]***, զի նոքա դիւաց են երկրպագուք: Իսկ սոքա ծառայք են մամոնայի եւ պաշտաւնատարք***[540]***, զի*** «ագահութիւնն[541] է կռապաշտութիւն[542]» (Կող. Գ. 5), ***որում վա՛յ տայ մարգարէն Ամբակում***[543]***՝ ասելով.*** «Վա՛յ որ ագահէ զագահութիւն չար փան իւրոյ[544] դնել ի բարձունս զբոյն իւր» (Ամբ. Բ. 9)***: Եւ Եսայի մարգարէն ասէ***[545]***.*** «Վա՛յ այնոցիկ[546], որ[547] յարեն[548] տուն ի տուն եւ ագարակ առ ագարակ մերձեցուցանեն, զի զընկերին[549] հանիցեն, միթէ միա՛յն բնակելոց իցէք յերկրի[550]» (Ես. Ե. 8)***: Զի որպէս***[551] ***հուր բորբոքեալ որչափ առաւել արկանես զնիւթն, առաւելապէս***[552] ***քաղցնու եւ մեծ բոց արձակէ եւ ոչ յագի***[553]***, այսպէս եւ***[554] ***ագահն ոչ երբէք***[555] ***ասէ շատ, եւ որչափ աճեն ստացուածքն***[556]***, առաւել քաղցնու եւ կարաւտի: Եւ որպէս ծով ոչ լցեալ լինի յանթիւ եւ ի բազում գետոց, որ մտանեն***[557] ***ի նա, այսպէս եւ ագահութիւն անաւրինին***[558] ***անյագ է:***

